

**Քրեադատավարական ոլորտում ընդդեմ Հայաստանի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռների ուսումնասիրություն**

*Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 3-րդ, 5-րդ և 6-րդ հոդվածների խախտումներ*

*Բովանդակություն*

<b>Ներածություն</b>	<b>3</b>
<b>Գլուխ 1 Խոշտանգումների արգելում (3-րդ հոդված)</b>	<b>5</b>
1. Կալանավորված անձանց պահելու վայրում անհամաչափ բժշկական օգնության ցուցաբերում, ամբաստանյալի անձի վտանգավորության աստիճանին անհամաչափ անվտանգության միջոցների կիրառում (Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի, Դավթյանն ընդդեմ Հայաստանի, Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի)	
2. Ոստիկանության ծառայողների կողմից մեղադրյալին ֆիզիկական և հոգեկան ցավ պատճառելը (Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի, Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի)	
<b>Գլուխ 2 Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք (5-րդ հոդված)</b>	<b>19</b>
1. Առանց օրինական հիմքի կալանքի տակ պահելը (Պողոսյանն ընդդեմ Հայաստանի, Ասատրյանն ընդդեմ Հայաստանի, Մուրադխանյանն ընդդեմ Հայաստանի, Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի, Մինասյանն ընդդեմ Հայաստանի)	
2. Կալանքի տակ գտնվելու դեմ անձի կողմից ներկայացված բողոքը քննելու մերժում (Մինասյանն ընդդեմ Հայաստանի)	
3. Կալանքի կիրառման հիմքերի վերացական և կարծրատիպային սահմանում, շարունակական կալանքի տակ պահելու ողջամիտ ժամկետի պահանջի խախտում (Մալխասյանն ընդդեմ Հայաստանի, Մուրադխանյանն ընդդեմ Հայաստանի, Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի)	
<b>Գլուխ 3 Արդարացի դատաքննության իրավունք (6-րդ հոդված)</b>	<b>41</b>

1. Արդարացի դատաքննության իրավունք (Հարությունյանն ընդդեմ Հայաստանի)
2. Դատարանի մատչելիության իրավունք (Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի)
3. Իր դեմ ցուցմունք տվող վկային հարցաքննելու իրավունք (Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի)
4. Ողջամիտ ժամկետում արդարացի դատաքննության իրավունք (Գրիգորյանն ընդդեմ Հայաստանի)

## **Ներածություն**

Ընդդեմ Հայաստանի մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից քրեադատավարական ոլորտին առնչվող է 20 վճիռ է կայացվել, որոնց ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արձանագրված խախտումները վերաբերում են մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. նոյեմբերի 4-ի եվրոպական կոնվենցիայի հետևյալ հոդվածներին:

### ***Հոդված 3. Խոշտանգումների արգելում***

Եվրոպական դատարանը մի շարք վճիռներով, մասնավորապես՝ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի, Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի, Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի, Դավթյանն ընդդեմ Հայաստանի, Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի գործերով արձանագրել է, որ դատաքննության ընթացքում մետաղական ճաղավանդակում պահելը այն պարագայում, երբ այն անհամաչափ է անձի վտանգավորության աստիճանի հետ, հանդիսանում անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վարվեցողություն կամ պատիժ: Բացի այդ, Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով մատնանշվել է, որ անձին բերման ենթարկելիս մարմնական վնասվածքների բացակայությունը, իսկ հետագայում՝ դրանց առկայությունը պարտավորեցնում է պետական մարմիններին հիմնավորել դրանց առաջացման պատճառներն ու աղբյուրները, հակառակ պարագայում անձի մասնակցությամբ կատարված գործողությունների արդյունքում ձեռք բերված ապացույցները անթույլատրելի են: Նալբանդյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրադատարանն արձանագրել է, որ ծեծի, խոշտանգումների և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի հետ կապված բազմաթիվ դիմում-բողոքները թողնվել են անհետևանք և որևէ գործողություն չի կատարվել դրանց բացակայությունը հիմնավորելու համար:

### ***Հոդված 5. Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք***

Եվրոպական դատարանը Ասատրյանն ընդդեմ Հայաստանի, Մալխասյանն ընդդեմ Հայաստանի, Մուրադխանյանն ընդդեմ Հայաստանի, Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի, Մինասյանն ընդդեմ Հայաստանի գործերով արձանագրել է, որ դատարանների կողմից կալանքի միջնորդությունների բավարարումը տեղի է ունեցել կալանքի հիմքերի վերացական և կարծրատիպային ձևակերպումներով, ինչի արդյունքում բացահայտված չեն քննությունից թաքնվելու և գործով անցնող այլ անձանց վրա ճնշում գործադրելու իրական հանգամանքները: Բացի այդ, Մուրադխանյանն ընդդեմ Հայաստանի գործով դատարանն արձանագրել է, որ նախաքննությունը ջանասիրաբար չի իրականացվել, ինչի արդյունքում ներպետական դատարանի կողմից գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելուց հետո շուրջ մեկ և կես տարի դարձյալ իրականացվել է նախաքննություն՝ անհարկի կալանքի տակ պահելով քաղաքացուն:

### ***Հոդված 6. Արդար Դատաքննության իրավունք***

Հոդվածի խախտում եվրոպական դատարանն արձանագրել է Հարությունյանն ընդդեմ Հայաստանի, Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի, Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի, Գրիգորյանն ընդդեմ Հայաստանի գործերով կայացված վճիռներում: Մասնավորապես, Հարությունյանն ընդդեմ Հայաստանի գործով դատարանն արձանագրել է, որ քաղաքացու կողմից ցուցմունքների հաճախակի փոփոխությունը պայմանավորված է պետական մարմնի ազդեցության և իրավասության տակ գտնվելու հանգամանքով, մինևույն ժամանակ, քննությամբ որևէ քայլ չի ձեռնարկվել վերոնշյալ գործոնների պատճառները բացահայտելու ուղղությամբ: Նշված դեպքում քաղաքացին գտնվել է զինվորական ծառայության մեջ և ցուցմունքները փոփոխել է նաև զինվորական ծառայությունն ավարտելուց հետո: Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի գործով կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտումն արձանագրվել է դատարանի դատավճիռը քաղաքացուն ուշ հանձնելու և այդ գործոնը հաշվի չառնելով բողոքարկման համար սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքով: Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի գործով դատարանն արձանագրել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածով հարուցված քրեական գործի դատաքննության ընթացքում չեն հարցաքննվել գործի համար կարևոր երկու վկաները, մինչդեռ միայն վերջիններիս ցուցմունքներով է առաջնորդվել դատարանը՝ դիմումատուի կողմից սահմանադրական կարգը բռնի տապալելու համար թռուցիկներ տարածելու հանգամանքը հիմնավորելիս:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր վճիռներում արձանագրել նաև կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտումներ (կրոնի ազատության իրավունք): Այդ բնագավառում խախտումներն արձանագրվել են այն ժամանակահատվածի հետ կապված, որի ընթացքում Հայաստանի հանրապետությունում դեռևս ընդունված չի եղել այլընտրանքային զինձառայության հետ կապված հարաբերությունները կարգավորող համապատասխան օրենսդրական ակտերը:

### **Հոդված 3 . Խոշտանգումների արգելում**

#### **Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի**

#### **Խախտում հոդված 3 նվաստացուցիչ վերաբերմունք**

Կալանավայրում անհամաչափ բժշկական օգնություն ցուցաբերել և վերաքննիչ դատական նիստի ընթացքում մետաղական ճաղավանդակի օգտագործել:

#### **ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ**

Դիմումատուն ծնվել է 1952թ.: Մահվան պահին նա պատիժ է կրել «Կոշ» քրեակատարողական հիմնարկում: 2001թ. նոյեմբերի 29-ին դիմումատուի նկատմամբ հարուցվել է քրեական գործ՝ հանցավոր ճանապարհով սեփականության ձեռքբերման և փաստաթղթերի կեղծման մեղադրանքով: Վերջինս նախկինում չի դատապարտվել, կասկածվում էր իր գործընկեր Վ.Գ.-ին հասանելիք շահույթը յուրացնելու մեջ: 2002թ. փետրվարի 8-ին գործը քննող մարմինը նշանակել է ձեռագրաբանական փորձաքննություն: 2003թ. մարտի 14-ին դիմումատուին վերոգրյալ հանցանքների համար մեղադրանք է առաջադրվել, ինչպես նաև նոր մեղադրանք՝ հարկերից խուսափելու համար, իսկ 2003թ. մայիսի 6-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը կալանավորելու որոշում է ընդունել: 2003թ. հունիսի 12-ին դատախազը մեղադրական եզրակացությամբ քրեական գործն ուղարկել է դատարան: 2004թ. հունվարի 27-ին Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի առաջին ատյանի դատարանը դիմումատուին մեղավոր է ճանաչել առաջադրված մեղադրանքներում և դատապարտել յոթ տարի ազատազրկման: Դատական նիստերի դահլիճում դիմումատուն պահվել է մոտ 3 ք.մ. մակերեսով մետաղյա ճաղավանդակում: Նիստի ընթացքում դիմումատուի փաստաբանը դատարանին ներկայացրեց միջնորդություն՝ պնդելով, որ բազմաթիվ մարդկանց, ներառյալ՝ հարազատների և ընկերների ներկայությամբ մետաղյա ճաղավանդակի մեջ պահելը նվաստացուցիչ վերաբերմունք է և ստորացնում է նրան: Բացի այդ, խախտվում է կողմերի հավասարության սկզբունքը, քանի որ դիմումատուն, լինելով ճաղավանդակում չի կարող զգալ իրեն դատավարության մյուս կողմի հետ հավասար պայմաններում: Այն,

որ դիմումատուն կալանավորված էր բավարար արդարացում չէ դատական նիստերի ժամանակ նրան մետաղյա ճաղավանդակում պահելու համար: Ոչ էլ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքն է որևէ դրույթ նախատեսում դատական նիստերի դահլիճում կալանավորված անձին ճաղավանդակի մեջ պահելու մասին: Փաստաբանը խնդրել է դատարանին դուրս բերել դիմումատուին մետաղյա ճաղավանդակից և թույլ տալ նստել դատավարության կողմերի համար նախատեսված նստարանին, մասնավորապես՝ իր փաստաբանի կողքին: Դատախազն առարկել է միջնորդության դեմ՝ պնդելով, որ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքը չի նախատեսում նաև ամբաստանյալին մետաղյա ճաղավանդակից դուրս բերելու վերաբերյալ որևէ դրույթ: Բացի այդ, ամբաստանյալը պետք է նստի իր համար նախատեսված տեղում և դա չի կարող համարվել արժանապատվության ոտնահարում: Տուժողի ներկայացուցիչը նույնպես առարկել է միջնորդության դեմ՝ պնդելով, որ դիմումատուն կալանավոր է, հետևաբար պետք է պահվի մետաղյա ճաղավանդակում: Բացի այդ, դատական նիստի դահլիճն ապահովված չէ անհրաժեշտ անվտանգության միջոցներով: Դատարանը մերժել է միջնորդությունը՝ անհիմն լինելու պատճառով և նշել, որ դատական նիստի ընթացքում ամբաստանյալին իր համար նախատեսված վայրում պահելը չի խախտում պաշտպանության կողմի վկայակոչած իրավունքները: Դատարանը նշել է նաև որ իր որոշումը հիմնված է անվտանգության նկատառումների վրա: Դատավարությունը տեսել է մոտ երկու ամիս և տեղի է ունեցել առնվազն տասներկու նիստ, որոնց տևողությունը միջինը չորս ժամ է եղել: Նիստերին ներկա են գտնվել դիմումատուի երեխաները, կինը, հարազատները, ընկերները և այլ անձինք:

*Դիմումատուի առողջական վիճակը և ազատագրկման ընթացքում պատշաճ բժշկական օգնության ենթադրյալ չտրամադրումը.* Մինչև կալանավորումը դիմումատուն ունեցել է մի շարք հիվանդություններ, այդ թվում՝ տասներկուամսնյա աղիքի սուր արյունահոսող խոց և շաքարախտ, իսկ 2001թ.-ին ստացել է սրտի կաթված: 2003թ. մայիսի 6-ին դիմումատուն տեղափոխվել է «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ, որտեղ գննվել է բժշկի կողմից, որի արդյունքում արձանագրվել է, որ վերջինս ունի սրտի իշեմիկ հիվանդություն, լեղապարկի քարեր և շաքարախտ: Դիմումատուն պարբերաբար գանգատվել է առողջական վիճակի հետ կապված, մասնավորապես՝ մարմնի էպիգաստրալ շրջանի ցավերից, որոնք սրվում էին գիշերը և թուլանում սննդի ընդունումից հետո: Դիմումատուն գանգատվել է նաև քաշի կորստից և հաճախակի փսխումներից: Վիրաբույժն արձանագրել է, որ նախքան կալանավորումը դիմումատուի մոտ հայտնաբերվել է տասներկուամսնյա աղիքի սուր արյունահոսող խոց և խորհուրդ է տվել կատարել վիրահատություն:

2003թ. օգոստոսի 14-ին շտապ օգնության խումբ է կանչվել դատական նիստերի դահլիճ՝ դիմումատուի սրտի աշխատանքի վատթարացման պատճառով: Նա գննվել է սրտաբանի կողմից, որն

ախտորոշում է սակավարյունություն, հետկաթվածային կարդիոսկլերոզ և ստենոկարդիա: Նշանակվել է Էլեկտրոկարդիոգրամային հետազոտություն, ինչպես նաև դեղորայք՝ վալիդոլ, անալգին և դիմեդրոլ: Նույն պատճառով 2003թ. օգոստոսի 22-ին շտապ օգնության խումբ է կանչվել դատական նիստերի դահլիճ: Դիմումատուի սրտի ախտորոշումը հաստատվել է ստացիոնար զննման և բուժման խորհուրդ է տրվել: Դիմումատուի փաստաբանները բազմաթիվ դիմումներ են ուղղել իրավապահ մարմիններին՝ առողջական վիճակի վատթարացման մասին: 2009թ. հունվարի 20-ին դիմումատուն մահացել է բնտում սրտի կաթվածից:

### **Դատարանի գնահատականը**

Դատարանը հատկապես անհանգստացնող է համարում այն հանգամանքը, որ դիմումատուի սրտի կաթվածը համընկել է դիմումատուի բժշկական օգնության կարիք ունենալու հանգամանքին իշխանությունների ուշադրությունը հրավիրելու՝ նրա փաստաբանի անհաջող փորձերի հետ: Դատարանը նշել է, որ ազատագրկման ընթացքում պատշաճ բժշկական օգնություն չցուցաբերելու վերաբերյալ գանգատների առկայության պարագայում պարտադիր չէ, որ նման օգնության բացակայությունը հանգեցնի բժշկական արտակարգ իրավիճակի կամ պատճառ հանդիսանա սուր և երկարատև ցավերի, որպեսզի ապացուցվի, որ ազատագրկված անձը ենթարկվել է 3-րդ հոդվածի երաշխիքների հետ անհամատեղելի վերաբերմունքի: Փաստը, որ կալանավորն ունեցել է նման օգնության կարիք և խնդրել է դրա համար, և որն անհասանելի է եղել, որոշ պայմաններում կարող է բավարար լինել եզրակացնելու, որ նման վերաբերմունքը նվաստացուցիչ է այս հոդվածի իմաստով:

Դիմումատուին վերաքննիչ դատավարության ընթացքում մետաղյա ճաղավանդակի մեջ պահելը գտավ, որ դատավարության ընթացքում ճաղավանդակի մեջ անձին պահելը կարող է դիտարկվել միայն որպես գործոն, որը կարող է նպաստել 3-րդ հոդվածի խախտման մասին որոշում կայացնելուն, սակայն ինքնին չի կարող համարվել բավարար նման որոշում կայացնելու համար: Դատարանը նշել է, որ նշված գործում քննարկվող անվտանգության միջոցներն արդարացված չեն: Դիմումատուին մետաղյա ճաղավանդակի մեջ պահելու անհրաժեշտությունն արդարացնող ոչ մի կոնկրետ պատճառ վերաքննիչ դատարանի կողմից չի ներկայացվել: Ավելին, մերժելով դիմումատուի համապատասխան միջնորդությունը՝ վերաքննիչ դատարանն ընդհանուր անդրադարձ է արել անվտանգության խնդրին՝ չտրամադրելով մանրամասն բացատրություն դիմումատուին մետաղյա ճաղավանդակից բաց թողնելու դեպքում դատական նիստերի դահլիճում անվտանգությանը սպառնացող պատճառների վերաբերյալ: Դատարանը նշել է, որ դիմումատուի անձի կամ վարքագծի հետ կապված ոչինչ չէր արդարացնում նման

անվտանգության միջոցի կիրառումը: Առաջին ատյանի դատարանում տեղի ունեցած դատավարության ողջ ընթացքում, որտեղ դիմումատուի նկատմամբ որևէ անվտանգության միջոց չի կիրառվել, նա կարգապահ է եղել և ոչ մի միջադեպ չի արձանագրվել: Ավելին, դիմումատուն չի ունեցել նախկին դատվածություն, չի արձանագրվել բռնի վարքագիծ և նա մեղադրվել է բռնությամբ չգուգորդված հանցագործության մեջ: Բացի այդ, դատախազի և վերաքննիչ դատարանի ելույթներից կարելի է եզրակացնել, որ մետաղյա ճաղավանդակը դատական նիստերի դահլիճում մշտական ատրիբուտ է և ծառայել է որպես նստատեղի և դիմումատուին այնտեղ տեղավորելը պայմանավորված չի եղել նրա՝ փախուստի կամ բռնության դիմելու իրական վտանգով, այլ այն պարզ հանգամանքով, որ դա այն տեղն էր, որտեղ Դիմումատուն, որպես քրեական գործով ամբաստանյալ պետք է գտնվեր:

**ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝ 1.** Հայտարարել է, որ դիմումատուին քրեակատարողական հիմնարկում անհրաժեշտ բժշկական օգնություն չցուցաբերելու և վերաքննիչ դատավարության ընթացքում մետաղյա ճաղավանդակի մեջ պահելու վերաբերյալ գանգատներն ընդունելի են և վճռել է, որ տեղի է ունեցել կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում:

### **Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի**

#### **Անձի նկատմամբ բռնություններ կիրառելու միջոցով ցուցմունքներ կորզել**

ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Դիմումատուն ծնվել է 1958 թվականին: Քննարկվող ժամանակահատվածում եղել է Հայաստանում հիմնական ընդդիմադիր կուսակցություններից մեկի՝ Հայաստանի Ժողովրդական Կուսակցության (ՀԺԿ) անդամ:

2003 թվականի փետրվար և մարտ ամիսներին Հայաստանում տեղի ունեցած նախագահական ընտրությունների ժամանակ դիմումատուն հանրահավաքներից մեկի ժամանակ տարվել է ոստիկանության բաժին, նրա նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ, իսկ հետո վերջինիս մեղադրանք է առաջադրվել վարչական վարույթի հարուցման մասին որոշումը իրեն հայտնած ոստիկանի վրա հարձակվելու համար: Ձերբակալություն իրականացնող ոստիկաններ Ռ.Ս.-ն և Ա.Ս.-ն երկուսն էլ ոստիկանապետին զեկուցել են, որ դիմումատուն իրենց հայեցողություններ է ուղղել ձերբակալության ժամանակ: Դիմումատուն պնդել է, որ ոստիկան Ա.Ս.—ի՝ աշխատասենյակից դուրս գալուց հետո մի քանի րոպե անց ներս է մտել ոստիկան Հ.Ս.-ն և սկսել հայեցողություններ: Այնուհետև ներս է մտել մեկ ուրիշ

նասիկան՝ Ա.Կ.-ն, և սկսել մետաղյա իրով հարվածել ամորձիների շրջանում: Հետո իրեն ձեռնաշղթաներ են հագցրել, և նասիկան Ա.Կ.-ն շարունակել է հարվածել և խփել գոտկատեղից ներքև, ինչից հետո գիտակցությունը կորցրել է:

Դիմումատուն նշել է, որ անկասկած առկա է ապացույց, որ նա ստացել է լուրջ վնասվածքներ նասիկանությունում անազատության մեջ պահվելու ընթացքում: Կառավարությունը, այնուամենայնիվ, չի կարողացել այս վնասվածքների առումով տրամադրել բավականաչափ և համոզիչ բացատրություն: Ներպետական մակարդակով վատ վերաբերմունքի մասին նրա պնդումները պատշաճ, խելամիտ և հիմնավորված էին, և նա օգտվել է բողոքի ներկայացման գանազան միջոցներից՝ նաև նրա դեմ հարուցված քրեական գործով վարույթն ավարտվելուց հետո: Ի տարբերություն դրա՝ հետաքննության ընթացքում նասիկանների կողմից տրված ցուցմունքները պարունակում էին բազմաթիվ անհամապատասխանություններ: Ոստիկանությունում իրեն անազատության մեջ պահելու հանգամանքները, մասնավորապես այն, որ նա ենթարկվել է հարցաքննման առանց իրավաբանի ներկայության և հարցաքննությունը չի ձայնագրվել, ցույց է տալիս, որ չեն պահպանվել չարաշահումների դեմ երաշխիքները: Ավելին, համաձայն դեպքերի պաշտոնական շարադրանքի՝ ենթադրյալ դեպքից հետո նա բժշկի կողմից զննության է ենթարկվել հարբածության վիճակի ստուգան համար: Այնուամենայնիվ, այդ զննության ընթացքում վնասվածքներ չեն հայտնաբերվել, ինչը ենթադրում է, որ նա պետք է որ ստացած լիներ այդ վնասվածքները ավելի ուշ ընկած ժամանակահատվածում:

### **Դատարանի գնահատականը**

Դատարանը վերահաստատել է, որ վատ վերաբերմունքը պետք է լինի նվազագույն ծանրության, որպեսզի համարվի 3-րդ հոդվածով նախատեսված: Այս նվազագույն հասկացության որոշումը հարաբերական է. այն կախված է գործի բոլոր հանգամանքներից, ինչպես օրինակ՝ վերաբերմունքի տևականությունից, դրա ֆիզիկական և հոգեկան ազդեցություններից և, որոշ դեպքերում՝ տուժողի սեռից, տարիքից և առողջական վիճակից: Երբ Դատարանը գնահատում էր այն ապացույցները, որոնց վրա անհրաժեշտ էր հիմնվել 3-րդ հոդվածով նախատեսված խախտման մասին որոշում կայացնելիս, գլխավորապես կիրառել է ապացուցման «Ողջամիտ կասկածից դուրս» չափանիշը: Այնուամենայնիվ, նման ապացույցը կարող է բխել այն հանգամանքից, որ առկա են բավարար լուրջ, պարզ և համապատասխան հետևություններ կամ փաստի նման անհերքելի կանխավարկածներ:



Այն դեպքում, երբ իրավասու մարմինները ամբողջությամբ կամ մեծամասամբ ծանոթ են խնդրահարույց իրադարձություններին, ինչպես օրինակ՝ իրենց վերահսկողության տակ անազատության մեջ գտնվող անձանց դեպքում, փաստի մասին նման կալանավորման ընթացքում ծագող վնասվածքների առումով լուրջ կանխավարկածներ կարող են առաջանալ: Իրականում, ապացուցման պարտականության առումով կարելի է համարել, որ մարմինների պարտականությունն է տալ բավարար և համոզիչ բացատրություն: Նմանապես, երբ անհատին առողջ տանում են ոստիկանության ձերբակալվածներին պահելու վայր, իսկ ազատվելուց պարզվում է, որ նա վնասվածքներ է ստացել, ապա պետության պարտականությունն է տալ արժանահավատ բացատրություն այն մասին, թե ինչպես են առաջացել այդ վնասվածքները, այլապես, խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի կասկածները փարատվում են հոգուտ դիմումատուի, և այս կապակցությամբ հարց կարող է բարձրացվել կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն:

Դատարանը, հիմնվելով իր տրամադրության տակ եղած բոլոր նյութերի վրա, գտել է, որ թե՛ կառավարության և թե՛ ներպետական մարմինների կողմից դիմումատուի վնասվածքների առումով տրված բացատրությունը խիստ կասկածելի են և անհավանական: Միննույն ժամանակ, այն նշում է, որ հետաքննության բոլոր փուլերում դիմումատուն ներկայացրել է համապատասխան և մանրամասն նկարագրություն այն մասին, թե ով է իր նկատմամբ վատ վերաբերմունք ցուցաբերել և ինչպես է դա տեղի ունեցել: Նրա պնդումները համապատասխանում են տարբեր բժշկական արձանագրություններում առկա նրա վնասվածքների նկարագրությանը:

Դատարանը համարել է, որ դիմումատուն ենթարկվել է առանձնապես դաժան վատ վերաբերմունքի, որը նրան պատճառել է սուր ֆիզիկական և հոգեկան ցավ և տառապանք, մասնավորապես, նրա ամորձիներին շարունակաբար հասցվել են հարվածներ ոտքերով, ձեռքերով և մետաղական առարկաներով: Այս վնասվածքները երկարատև հետևանքներ են թողել նրա առողջության վրա, քանի որ նրա ձախ ամորձին այնպես է պատռվել, որ այն ստիպված հեռացվել է:

**ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱԴԱՆԸ ԵԶՐԱԿԱՑՐԵԼ Է՝ անձի նկատմամբ բռնություններ կիրառելու միջոցով ցուցմունքներ կորզելու և այդ բռնությունների չկիրառման հանգամանքը պետության կողմից չապացուցելու հետ կապված տեղի է ունեցել կոնվենցիայի 3-րդ հոդվածի էական խախտում:**

**Նայրանդյանն ընդդեմ Հայաստանի**

**Քննություն իրականացնող մարմինների կողմից անձի նկատմամբ «վատ վերաբերմունքի» դրսևորման արդյունքում մարմնական վնասվածքներ պատճառելը և նման վերաբերմունքի մասին պնդումները բարձր աստիճաններին ներկայացնելու ապարդյուն քայլերը**

ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Դիմումատուները ծնվել են համապատասխանաբար 1961, 1964 և 1988 թվականներին: Առաջին և երկրորդ դիմումատուները գանգատները ներկայացնելու պահին պատիժ են կրել «Կոշ» և «Աբովյան» քրեակատարողական հիմնարկներում: Երրորդ դիմումատուն բնակվել է Հայաստանի Հանրապետության Վարդենիս քաղաքում: Առաջին և երկրորդ դիմումատուներն ամուսիններ են:

Երրորդ դիմումատուն իրենց դուստրն է: Գործի քննության ժամանակ նրանք բնակվել են Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքում: 2004 թվականի հունիսի 8-ին քրեական գործ է հարուցվել տեղացի աղջկա սպանության փաստի առթիվ, ով երրորդ դիմումատուի համադասարանցին է եղել, և ում մարմինը հայտնաբերվել է դիմումատուների տանից ոչ հեռու: Առաջին դիմումատուն պնդում է, որ այդ նույն օրը նրան տարել են ոստիկանության Վարդենիսի բաժին, որտեղ նրան ապօրինի պահել են՝ առանց ձերբակալումն արձանագրելու: Ոստիկանության բաժնում ոստիկանները նրան շարունակաբար ծեծել են՝ փորձելով ստիպել խոստովանել, որ վերոնշյալ սպանությունը կատարել է ինքը: 2004 թվականի հունիսի 24-ին Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը, վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածի համաձայն, առաջին դիմումատուին մեղավոր է ճանաչել ոստիկանների օրինական պահանջներին չարամտորեն չենթարկվելու համար, և նրա նկատմամբ նշանակել է տասնհինգ օր ժամկետով կալանք: Դատարանը գտել է, որ առաջին դիմումատուն փողոցում հայհոյել է և չի ենթարկվել իրեն կարգի հրավիրելու փորձեր կատարող ոստիկաններին: Առաջին դիմումատուն պնդում է, որ որոշումն անհիմն է և որ իրականում իրեն այդ ամբողջ ժամանակահատվածում ոստիկանության բաժնում պահել են վերոնշյալ սպանության կապակցությամբ: Նրա նկատմամբ կիրառված վարչական տույժը պարզապես օգտագործվել է՝ որպես նրան ազատությունից շարունակական անօրինական զրկելն օրինականացնելու միջոց: Երկրորդ և երրորդ դիմումատուները պնդել են, որ 2004 թվականի հունիսի

8-ից ի վեր նրանց նույնպես շարունակաբար ճնշել են տեղի իրավապահ մարմինների աշխատակիցները, հաճախ տարել են ոստիկանության բաժին, ինչպես նաև ճնշել և ստիպել են խոստովանել սպանությունը կամ մեղադրել միմյանց: Երկրորդ դիմումատուն պնդում է, որ 2004 թվականի հուլիսի 8-ին նրան կանչել են ոստիկանության Վարդենիսի բաժին, որտեղ բաժնի պետ Վ. Հ.-ն նրան կարգադրել է ցուցմունք տալ առաջին դիմումատուի դեմ: Երբ նա հրաժարվել է, նրան ծեծել են Վ. Հ.-ն և իրավապահ մարմինների բազմաթիվ այլ աշխատակիցներ, այդ թվում՝ քրեական հետախուզության բաժանմունքի պետի տեղակալ Ն. Հ.-ն, քրեական հետախուզության բաժանմունքի երկու աշխատակից՝ Կ. Ն.-ն և Կ. Մ.-ն, ինչպես նաև Գեղարքունիքի մարզի դատախազի տեղակալ Ֆ.Բ.-ն: Նրան ծեծել են մահակներով, իսկ երբ նա ուշաթափվել է, ոստիկանները գիտակցության են բերել և շարունակել են ծեծել: Դրանից հետո ոստիկաններն երրորդ դիմումատուին բերել են ոստիկանության բաժին և փակել մոտակա մույթ ու առնետներով լի սենյակում: Երկրորդ դիմումատուին սպառնացել են, որ կբռնաբարեն երրորդ դիմումատուին, եթե նա հրաժարվի խոստովանել: Դրանից հետո նա խոստովանել է: Ըստ երևույթին, առաջին դիմումատուն նաև խոստովանել է, որ ինքն օժանդակել է երկրորդ դիմումատուին սպանությունը կատարելու մեջ: Երրորդ դիմումատուն պնդել է, որ իրեն բազմաթիվ առիթներով տարել են ոստիկանության բաժին՝ հաճախ ուշ ժամերի: Ոստիկանները նրան նվաստացրել են, սպառնացել են բռնաբարել և ճնշում են գործադրել, որպեսզի նա ընդունի, որ երկրորդ դիմումատուն է կատարել սպանությունը, և որ դրա շարժառիթը նրա և տուժողի միջև լարված հարաբերություններ են: Նա նաև պնդել է, որ տեսել է իր հորը և մորը ոստիկանության բաժնում, և որ նրանց վրա առկա էին վատ վերաբերմունքի հետքեր:

2004 թվականի հուլիսի 14-ին՝ այն բանից հետո, երբ առաջին և երկրորդ դիմումատուներին մեղադրանք է առաջադրվել և նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը, երկրորդ դիմումատուն տեղափոխվել է Աբովյան քրեակատարողական հիմնարկ, որտեղ մուտք գործելիս վերջինս ենթարկվել է բժշկական զննության, ինչի արդյունքում էլ արձանագրվել են ակնհայտ վնասվածքներ ոտքերի շրջանում: Երրորդ դիմումատուի բժշկական ստուգման արդյունքում ևս հայտնաբերվել են մարմնական վնասվածքներ գլխի և ձախ ձեռքի շրջանում: 2005թ. փետրվարի 4-ին դիմումատուները առաջին աստիճանի դատարանի կողմից մեղավոր են ճանաչվել սպանություն կատարելու մեջ և դատապարտվել 9 և 14 տարի ազատազրկման: Դատարանը նաև քննել և մերժել է դիմումատուների կողմից ներկայացված՝ խոշտանգումների ենթարկվելու վերաբերյալ բոլոր միջնորդությունները և պնդումները՝ դրանք համարելով չպատճառաբանված:

## **Դատարանի գնահատականը**

Դատարանը վերահաստատել է, որ վատ վերաբերմունքը պետք է ունենա դաժանության նվազագույն աստիճան, որպեսզի որակվի 3-րդ հոդվածի շրջանակներում: Դաժանության նվազագույն աստիճանի գնահատումը հարաբերական է. այն կախված է գործի բոլոր հանգամանքներից, ինչպիսիք են օրինակ՝ վերաբերմունքի տևականությունը, դրա ֆիզիկական և հոգեկան ազդեցությունը և, որոշ դեպքերում՝ տուժողի սեռը, տարիքը և առողջական վիճակը: Ազատությունից զրկված անձի նկատմամբ ֆիզիկական ուժ գործադրելը, եթե դա չի կատարվել վերջինիս սեփական վարքագծից առաջացած խիստ անհրաժեշտության պայմաններում, նվաստացնում է մարդկային արժանապատվությունը և, ըստ էության, Կոնվենցիայի 3-րդ հոդվածում սահմանված իրավունքի խախտում է:

Երբ դատարանը գնահատում է 3-րդ հոդվածով նախատեսված խախտման մասին որոշում կայացնելու համար անհրաժեշտ ապացույցները, այն գլխավորապես կիրառում է ապացուցման «ողջամիտ կասկածից դուրս» չափանիշը: Այնուամենայնիվ, նման ապացույցը կարող է բխել այն հանգամանքից, որ առկա են բավականաչափ ծանրակշիռ, հստակ և համապատասխանող հետևություններ կամ փաստի առկայության մասին վկայող նման անհերքելի կանխավարկածներ: Եթե պետական մարմիններն ամբողջությամբ կամ մեծամասամբ ծանոթ են խնդրահարույց իրադարձություններին, ինչպես օրինակ իրենց վերահսկողության տակ գտնվող ազատությունից զրկված անձանց դեպքում, ապա ազատությունից զրկված լինելու ընթացքում վնասվածքների առաջացման փաստի մասին կծագեն հիմնավոր կանխավարկածներ: Ապացուցման բեռը, այն է՝ տալ բավարար և համոզիչ բացատրություններ, կրում են իշխանությունները: Նույն կերպ, երբ անհատին առողջ վիճակում տանում են ոստիկանության ձեռքակալվածներին պահելու վայր, իսկ ազատվելիս նրա մոտ հայտնաբերվում են վնասվածքներ, ապա պետությունը պարտավորվում է վնասվածքների առաջացման մասին արժանահավատ բացատրություններ տալ: Այլապես, խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի կասկածները փարատվում են հոգուտ դիմումատուի, և այս կապակցությամբ հարց կարող է բարձրացվել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն:

Քննարկվող գործով դատարանը արձանագրել է, որ Կառավարության պնդմանը հակառակ, երկրորդ և երրորդ դիմումատուները ներկայացրել են այնպիսի ապացույցներ, որոնք վկայում են քննարկվող ժամանակահատվածում մարմնական վնասվածքների առկայության մասին: Մասնավորապես, ոստիկանության Վարդենիսի բաժնից «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ

տեղափոխվելուց անմիջապես հետո երկրորդ դիմումատուն հետագուովել է բժշկի կողմից, և նրա մոտ հայտնաբերվել են ոտքերի վնասվածքներ: Կառավարությունը պնդել է, որ այդ վնասվածքներն առաջացել են այտուցվածությունից, բայց չի կարողացել բացատրել, թե ինչպես է երկրորդ դիմումատուի մոտ առաջացել այդ այտուցվածությունը, հատկապես նման լուրջ այտուցվածություն, որը հանգեցրել է արյունատար անոթների վնասվածքի և կապտուկների: Կառավարության այն փաստարկը, որ այտուցվածությունն առաջացել է երկրորդ դիմումատուի արյան բարձր ճնշման հետևանքով, չի հիմնավորվում որևէ բժշկական կամ այլ ապացույցով և, հետևաբար, չի կարող ընդունվել որպես նման վնասվածքների վերաբերյալ բժշկական առումով ճշգրիտ կամ արժանահավատ բացատրություն: Հետևաբար, երկրորդ դիմումատուն ոստիկանության Վարդենիսի բաժնից ազատ է արձակվել ոտքերի բավականին լուրջ վնասվածքներով, որի համար Կառավարությունը չի կարողացել որևէ արժանահավատ բացատրություն տալ: Ոչինչ չի վկայում այն մասին, որ նա նախքան ոստիկանության բաժին մուտք գործելը նման վնասվածքներ է ունեցել:

Դատարանը եզրակացրել է, որ երկրորդ դիմումատուն ոստիկանության Վարդենիսի բաժնում վատ վերաբերմունքի է ենթարկվել, որը, անկասկած, հասել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածով սահմանված դաժանության նվազագույն աստիճանի:

Ինչ վերաբերում է երրորդ դիմումատուին, դատարանը, նշել է, որ 2004 թվականի հուլիսի 10-ին երրորդ դիմումատուի ոստիկանության Վարդենիսի բաժնում հարցաքննության նպատակով գտնվելու փաստը չի վիճարկվում: Դատարանը նաև նշել է, որ երրորդ դիմումատուի ոստիկանության բաժնից առանց վնասվածքների ազատ արձակվելու վերաբերյալ որևէ ապացույց չկա: Սակայն բազմաթիվ վնասվածքներ արձանագրվել են 2004 թվականի հուլիսի 16-ին՝ այն բանից հետո, երբ նրա մորեղբայրը բժշկական հետազոտություն անցնելու նպատակով իրեն տարել է Երևան:

Դատարանը չի ընդունել Կառավարության այն փաստարկը, որ երրորդ դիմումատուի կողմից խոստովանական ցուցմունքների բացակայությունը կարող է իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից վատ վերաբերմունքի ենթարկված չլինելու ապացույց հանդիսանալ: Դատարանը նաև չի համաձայնել Կառավարության այն հայտարարության հետ, որ «Արմենիա» բժշկական կենտրոնի բժշկական եզրակացությունը պատշաճ ապացույց չէ միայն այն հիմքով, որ նրանում նշված չեն արձանագրված վնասվածքների պատճառները: Ընդ որում, այս փաստաթուղթը գործի քննության ժամանակահատվածում ներկայացվել է քրեական հետապնդման մարմիններին, որոնք չեն վիճարկել դրա արժանահավատությունը կամ ճշգրտությունը, կամ չեն հերքել այդ վնասվածքների և երրորդ դիմումատուի ոստիկանության Վարդենիսի բաժնում մնալու միջև

հնարավոր կապը՝ չնայած նրա համապատասխան բողոքին:

Դատարանը եզրակացրել է, որ իշխանություններին չի հաջողվել պատշաճ կերպով ձեռք բերել և գնահատել կարևոր նշանակություն ունեցող բժշկական և այլ բնույթի ապացույցներ, որոնք կարևոր նշանակություն ունեին գործի արդյունավետ լուծման համար:

Բացի այդ, դատարանը նշել է դիմումատուների՝ վատ վերաբերմունքի մասին պնդումներն ավելի բարձր ատյանների վերանայմանը ներկայացնելու փորձերի ապարդյունության մասին: Վատ վերաբերմունքի վերաբերյալ իրենց պնդումների առնչությամբ բազմակողմանի քննություն իրականացնելու և նշված արարքների ենթադրյալ կատարողներին հետապնդելու և պատժելու մասին դիմումատուների կողմից գլխավոր դատախազություն ուղարկված բազմաթիվ բողոքներին տրվել են ձևական պատասխաններ:

**ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՍԲ ԴԱՏԱՐԱՆԸ ԵԶՐԱԿԱՑՐԵԼ Է՝ վատ վերաբերմունքի մասին դիմումատուների պնդումների առնչությամբ իշխանությունների կողմից իրականացված քննությունը եղել է անարդյունավետ, հետևաբար, բոլոր երեք դիմումատուների նկատմամբ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ընթացակարգային խախտում:**

### **Դավթյանն ընդդեմ Հայաստանի**

#### **Անձի նկատմամբ կալանքի շարունակական երկարացման անհիմն լինելը և դրա արդյունքում անհրաժեշտ բժշկական օգնություն չտրամադրելը**

ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Դիմումատուն ծնվել է 1962 թվականին և ապրում է Երևանում: 1997-1999 թվականներին դիմումատուն աշխատել է որպես «Կրեդիտ-Սերվիս Բանկ» ընկերության գործադիր տնօրեն: 2002 թվականի մարտի 19-ին դատախազը որոշել է քրեական գործ հարուցել նախկին քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով, այն է՝ բանկի նախկին կառավարչի կողմից իր պաշտոնական դիրքի չարաշահման միջոցով մեկ այլ ընկերության կողմից 2001 թվականի հունիսին բանկին վստահված ֆինանսական միջոցների յուրացման դեպքով: 2003 թվականի մարտի 31-ին դիմումատուն ձերբակալվել է խոշոր չափի յուրացման, պաշտոնական դիրքի չարաշահման և պաշտոնական փաստաթղթեր կեղծելու կասկածանքով՝ նախկին ՔՕ-ի 90-րդ հոդվածի 4-րդ մասի, 182-րդ հոդվածի 1-ին մասի և 187-րդ հոդվածի հատկանիշներով: 2003 թվականի ապրիլի 1-ին դիմումատուի նկատմամբ պաշտոնական մեղադրանք է առաջադրվել նախկին ՔՕ-ի 90-րդ հոդվածի 4-

րդ մասով, 182-րդ հոդվածի 1-ին մասով և 187-րդ հոդվածով՝ իր պաշտոնեական դիրքը չարաշահելու և որպես գործադիր տնօրեն 1997- 1999թթ. իր պաշտոնավարման ընթացքում կեղծ հաշվապահական փաստաթղթերի պատրաստման ու օգտագործման միջոցով յուրացման հիմքով բանկին և դրա հաճախորդներին վնաս պատճառելով: Պարզվել է, որ 10 այլ անձանց նկատմամբ ևս մեղադրանք է առաջադրվել այս կամ սրա հետ կապված այլ հանցագործությունների կատարման մեջ ներգրավվածության համար: Նույն օրը Երևանի Կենտրոն և Նորք-Աարաշ վարչական շրջանների դատարանը բավարարել է դիմումատուի նկատմամբ երկու ամիս ժամկետով նախնական կալանք ընտրելու մասին քննիչի միջնորդությունը: Դիմումատուն պնդել է, որ դատական նիստի ընթացքում իր փաստաբանը դատարանին միջնորդել է կալանքը որպես խափանման միջոց չկիրառել՝ հաշվի առնելով դիմումատուի առողջական վատ վիճակը: Դիմումատուի կալանքի ժամկետն այնուհետև երկարացվել է վարչական շրջանի դատարանի կողմից երկու անգամ՝ մինչև 2003 թվականի օգոստոսի 31-ը: 2003 թվականի ապրիլի 2-ին ՀՀ ԱԺ ինն անդամներից բաղկացած խումբը դիմել է ՀՀ գլխավոր դատախազին՝ դիմումատուի նկատմամբ կիրառված կալանքը մեկ այլ խափանման միջոցով փոխարինելու միջնորդությամբ՝ հաշվի առնելով դիմումատուի առողջական վատ վիճակը: 2003 թվականի ապրիլի 10-ին գլխավոր դատախազությունը գրություն է ուղարկել ՀՀ ԱԺ աշխատակազմի ղեկավարին՝ նշելով, որ դիմումատուին ազատ արձակելը հնարավոր չէ, քանի որ նա կատարել է ծանր հանցագործություն և հրաժարվել է յուրացված ֆինանսական միջոցները վերադարձնելուց: 2005 թվականի նոյեմբերի 14-ին Երևանի Կենտրոն և Նորք- Մարաշ վարչական շրջանների դատարանը դիմումատուին մեղավոր է ճանաչել նոր օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 1-ին մասով: 2003 թվականի ապրիլին դիմումատուին տեղափոխել են «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ: 2003 թվականի ապրիլի 4-ին դիմումատուն հիմնարկի բժշկական սպասարկման բաժնում գննում է անցել և նրա մոտ ախտորոշվել է կոկորդի ուռուցք: Նա նաև բողոքել է կոկորդի ցավից, ձայնի կորստից և կրծքավանդակի շրջանում ցավից: 2003 թվականի ապրիլի 28-ին դիմումատուն գննվել է անկախ բժիշկի կողմից, ով առաջարկել է, որ դիմումատուն հետազոտվի քիթ-կոկորդ-ականջաբանի կողմից: 2003 թվականի ապրիլի 29-ին դիմումատուն գննում է անցել քիթ-կոկորդ-ականջաբանի մոտ, որը հաստատել է կոկորդի ուռուցքի ախտորոշումը: Ուռուցքի բնույթը որոշելու համար բժիշկը խորհուրդ է տվել կատարել բիոպսիա, կոկորդի համակարգչային տոմոգրաֆիա, լրացուցիչ հետազոտություն ու բուժում: 2003 թվականի մայիսի 8-ին դիմումատուի մոտ, ակնհայտորեն իր ընդունած դեղերի հետևանքով, առաջացել են անաֆիլակտիկ շոկի այնպիսի ախտանիշներ, ինչպիսիք են եղնջացանը, վերջույթներում սառնությունը, սուր դողը և արյան ճնշման անկումը՝ մինչև 20/40, ինչին հետևել է գիտակցության կորուստը: Առաջին օգնությունը ցուցաբերվել է

քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի կողմից, և շտապ օգնություն է կանչվել: 2003 թվականի հունիսի 13-ին դիմումատուի վիճակը կտրուկ վատացել է: Նրա մոտ նկատվել են դժվար շնչառություն, այտուցվածություն՝ դեմքի հատվածում, արյան ճնշման անկում՝ մինչև 50/20, վերջույթների այտուցվածություն և Կվինկեի այտուց: Ցուցաբերվել է առաջին օգնություն: 2003 թվականի հուլիսի 10-ին դիմումատուին զննել է հոգեբույժը: Դիմումատուն գանգատվել է տրամադրության անկումից, դյուրագրգռությունից, անքնությունից և հաճախասրտությունից, ինչպես նաև պարբերաբար կրկնվող գլխացավերից, կրծքավանդակի շրջանում ցավերից և արյան բարձր ճնշումից՝ պայմանավորված հաճախակի առաջացող հուզական սթրեսով: Այդ օրվանից սկսած, դիմումատուն գտնվել է հոգեբույժի կանոնավոր հսկողության տակ: Դիմումատուն պնդել է, որ 2014 թվականի ապրիլի 27-ին կամ այդ օրերին իրեն տեղեկացրել են, որ քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնից իրեն տեղափոխելու են հասարակ խույս: Դիմումատուն հրաժարվել է տեղափոխվելուց՝ որպես պատճառ նշելով իր վատ առողջական վիճակը, և ըստ այդմ՝ տեղափոխվել է պատժախույս՝ երեք օրով: Առաջին գիշերը պատժախույսում նրան չեն տրվել ծածկոցներ և անկողնու սպիտակեղեն: Երկրորդ գիշերը դիմումատուի առողջությունը վատացել է՝ շնչառությունը դժվարացել է, ունեցել է շնչահեղձության նոպաներ և արյան բարձր ճնշում: Դիմումատուն խնդրել է պահակին կանչել ֆելդշերին (բժշկի օգնականին): Երբ ֆելդշերը եկել է, նա չի կարողացել մտնել պատժախույս, քանի որ այն կողպված է եղել, իսկ պահակը բանալի չի ունեցել: Ֆելդշերի բողոքելուց հետո կես ժամ անց բանալին գտնվել է: Երրորդ օրվա առավոտյան դիմումատուն հետ է տեղափոխվել բժշկական սպասարկման բաժին: 2004 թվականի մայիսի 20-ին դիմումատուի վիճակը կտրուկ վատացել է: Համաձայն նրա բժշկական քարտ՝ նրա ալերգիան վատացել է գիշերը, և նա ընկել է կոլապսոիդ վիճակի մեջ: Դիմումատուն գանգատվել է հազից, մաշկի և քթի քորից, հևոցից, շնչահեղձության նոպաներից և դեմքի ու շուրթերի այտուցվածությունից: 2005 թվականի ապրիլին, չպարզված օրը, դիմումատուին զննել է անկախ բժիշկը, որը նշել է, որ դիմումատուի կոկորդի ուռուցքի հետ կապված վերջնական ախտորոշման համար անհրաժեշտ է, որ նա անցնի համակարգչային տոմոգրաֆիա կամ մագնիսական-ռեզոնանսային պատկերում (ՄՌՏ): 2005 թվականի ապրիլի 8-ին քրեակատարողական հիմնարկի բժիշկ Ն.-ն հայտնել է շրջանի դատարանին, որ դիմումատուն ի վիճակի չէ մասնակցելու այդ օրը կայանալիք նիստին, քանի որ վերջինս հիվանդ է կվինկեի այտուցով: 2006 թվականի մարտի 2-ին քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի ղեկավարը տեղեկացրել է վերաքննիչ դատարանին, որ դիմումատուն ի վիճակի չէ մասնակցելու այդ ամսաթվին կայանալիք նիստին, քանի որ նա տառապում էր շնչահեղձության նոպաներով: 2006 թվականի մարտի 4-ին դիմումատուն տեղափոխվել է «Արմենիա» բժշկական կենտրոն: Նրա մոտ ախտորոշվել է



ձայնալարերի քաղցկեղ:

2006 թվականի հունիսի 23-ին դիմումատուն պատժից պայմանական վաղաժամկետ ազատվել է:

### **ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 3-Դ ՀՈԴՎԱԾԻ ԽԱԽՏՈՒՄ**

Դիմումատուն բողոքել է, որ իր նկատմամբ կիրառված շարունակական կալանքը հավասարազոր է անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի՝ հաշվի առնելով իր առողջական վատ վիճակը և անհրաժեշտ բժշկական օգնության բացակայությունը: Նա վկայակոչել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածը, համաձայն որի՝

Դատարանն ի սկզբանե նշել է, որ անհերքելի է, որ դիմումատուն տառապել է մի շարք հիվանդություններով՝ այդ թվում՝ ձայնալարերի քաղցկեղով, որը պահանջում էր մասնագիտացված հետազոտություն և բուժում: Կոկորդի բիոպսիա, համակարգչային տոմոգրաֆիա և լրացուցիչ հետազոտություն ու բուժում իրականացնելու առաջարկությունն արվել էր 2003 թվականի ապրիլի 29-ին՝ դիմումատուին կալանավորելուց հետո դեռ մեկ ամիսը չլրացած: Այնուամենայնիվ, պարզվում է, որ այս անալիզներից ոչ մեկը ողջամիտ ժամկետում չի իրականացվել: Այնուհետև, դատարանը նշել է, որ նմանատիպ առաջարկություններ արվել են 2005 թվականի հունվարին և ապրիլին, սակայն կրկին անօգուտ: Ներպետական դատարանները բազմիցս, այդ թվում՝ 2005 թվականի փետրվարին քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից, տեղեկացվել են դիմումատուի առողջական վիճակի և մասնագիտացված հետազոտության ու բուժման անհրաժեշտության մասին: Գործի նյութերից՝ ներառյալ քրեակատարողական հիմնարկի բժշկի՝ 2006 թվականի հունվարի 31-ի նիստին արված հայտարարությունից բխում է, որ քրեակատարողական հիմնարկը, և նույնիսկ ողջ քրեակատարողական համակարգը, չունի ո՛չ անհրաժեշտ մասնագետներ, ո՛չ էլ մասնագիտացված սարքավորումներ՝ համապատասխան հետազոտություններ և բուժում իրականացնելու համար: Չնայած դրա, մասնագիտացված հետազոտությունների անցկացման համար դիմումատուին քրեակատարողական հիմնարկից տեղափոխել են անկախ գործող հիվանդանոց միայն 2005 թվականի հունիսին՝ վարչակազմի կողմից կրկնակի պահանջ ներկայացնելուց հետո: Այդպիսով, բժշկի՝ 2003 թվականի ապրիլի 29-ի՝ դիմումատուին մասնագիտացված հետազոտության ուղարկելու վերաբերյալ առաջարկին առաջին անգամ ընթացք է տրվել ավելի քան երկու տարի անց:

**ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ԵԶՐԱԿԱՑՐԵԼ Է՝ անձին համապատասխան բժշկական օգնություն չտրամադրելու խնդրով առկա է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում:**

Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի

Անձին դատական նիստերի ընթացքում մետաղական ճաղավանդակում պահել և վերջինիս նկատմամբ նվաստացուցիչ վերաբերմունքի դրսևորում

Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում՝ նվաստացուցիչ վերաբերմունք  
Եվրոպական դատարանը Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի գործով իր իրավական գնահատականներում հղում է կատարել Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի գործով արդեն իսկ արված եզրակացության և իրավական գնահատականներին՝ կապված մետաղական ճաղավանդակում անձին պահելով՝ նրա նկատմամբ նվաստացուցիչ վերաբերմունք դրսևորելու հետ կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում: Դիմումատուն մետաղական ճաղավանդակում պահվել է կալանքը որպես խափանման միջոց ընտրելու համար անցկացված դատական նիստերի ողջ ընթացքում:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴՍԱՐԱՆԸ ԵԶՐԱԿԱՑՐԵԼ Է՝ Անձին դատական նիստերի ընթացքում մետաղական ճաղավանդակում պահելու և վերջինիս նկատմամբ նվաստացուցիչ վերաբերմունքի դրսևորելու դեպքով առկա է կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում:

Ընդդեմ Հայաստանի եվրոպական դատարանի կայացրած վճիռների ուսումնասիրությունը՝ կապված կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտումների հետ ցույց են տալիս, որ այս բնագավառում Հայաստանի Հանրապետության ներպետական իրավունքում բացթողումներ առկա չեն: Վճիռներում արձանագրված խախտումները վերաբերում են մինչդասական վարույթի ընթացքում անձանց նկատմամբ կիրառված բռնություններին, մեղադրյալների, ամբաստանյալների նկատմամբ կիրառված և նվաստացուցիչ վերաբերմունքի դրսևորում հանդիսացող անվտանգության միջոցների կիրառությանը, ինչպես նաև բուժօգնության կարիք ունեցող անձանց համապատասխան և անհրաժեշտ օգնություն չտրամադրելուն: Այսինքն՝ խախտումներն արձանագրվել են փաստացի դաշտում:

Հոդված 5. Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք.

Կալանքը որպես խափանման միջոց կիրառելու օրինականությունը և հիմնավորվածությունը

Պողոսյանն ընդդեմ Հայաստանի

Առանց օրինական հիմքի կալանքի տակ պահելը և դրա բողոքարկման հնարավորության բացակայությունը

ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Դիմումատուն ծնվել է 1981թ. և ապրում է Երևան քաղաքում: Նրա նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել գողության և խարդախության համար՝ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերի և 178-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով: 2007թ. փետրվարի 15-ին դիմումատուին մեղադրանք է առաջադրվել: Դիմումատուի նկատմամբ հետախուզում էր հայտարարվել, քանի որ նա թաքնվում էր հետաքննությունից: Նույն օրը Արարատի մարզի առաջին ատյանի դատարանը քննել և բավարարել է դիմումատուին կալանքի տակ պահելու մասին քննիչի միջնորդությունը: Այս որոշումը հիմնվում է վերագրվող արարքների բնույթի և վտանգավորության աստիճանի, ինչպես նաև այն փաստի վրա, որ դիմումատուն թաքնվել է հետաքննությունից և կարող է խոչընդոտել գործի քննությանը քրեական դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ անօրինական ճնշում գործադրելով: Կալանավորումը սահմանվեց երկու ամիս ժամկետով և պետք է հաշվարկվեր դիմումատուին կալանքի տակ վերցնելու պահից: 2007թ. ապրիլի 13-ին դիմումատուն ձերբակալվել և փոխադրվել է Արարատի մարզի ոստիկանության բաժին, որտեղ նա տեղեկացել է 2007թ. փետրվարի 15-ի որոշման մասին: Այնուհետև դիմումատուն փոխադրվել է «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ: 2007թ. մայիսի 31-ին դիմումատուն գրավի դիմաց կալանքից ազատվելու միջնորդություն է ներկայացրել Արարատի մարզի առաջին ատյանի դատարան: Դիմումատուն ի սկզբանե նշել է, որ առաջին ատյանի դատարանը, հաշվի չառնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (ՔՂՕ) 137-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջները, 2007թ. փետրվարի 15-ի որոշման մեջ չի անդրադարձել իրեն գրավի դիմաց կալանքից ազատելու հարցին: Նա հետագայում նշել է, որ մեղադրանքի ծանրության պատճառով գրավի դիմաց կալանքից ազատվելու օրենքով նախատեսված իրավունք չունենալու փաստը հակասում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասն: Դիմումատուն խնդրել է դատարանին կիրառել Կոնվենցիայի պահանջները և ազատ արձակել իրեն, նշելով, որ չի թաքնվել վարույթն իրականացնող մարմնից: Դիմումատուն պնդել է, որ մինչ իր ձերբակալությունը նա գործնական նպատակներով

բացակայել է քաղաքից և երբևէ չէր տեղեկացվել իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդման մասին: Եվ, վերջապես նշել է, որ իր ձերբակալությունից հետո իրեն չեն ներկայացրել դատարանի առջև՝ ի հակասություն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին:

2007թ. հունիսի 5-ին հետաքննությունն ավարտվել է: 2007թ. հունիսի 8-ին Արարատի մարզի առաջին ատյանի դատարանը քննել է 2007թ. մայիսի 31-ին ներկայացված միջնորդությունը: Առաջին ատյանի դատարանը, վկայակոչելով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասը, ի սկզբանե նշել է, որ միջազգային իրավունքի դրույթները գերակայություն ունեն ներպետական իրավունքի դրույթների նկատմամբ, հետևաբար, դիմումատուին գրավի դիմաց կալանքից ազատելու հարցը ենթակա էր քննության: Այնուամենայնիվ, առաջին ատյանի դատարանը որոշել է մերժել դիմումատուի ազատ արձակելու վերաբերյալ պահանջը, գտնելով, որ առկա է դիմումատուի՝ քննությունից թաքնվելու վտանգ և հետևաբար պատասխանատվությունից և պատժից խուսափելու վտանգ՝ հաշվի առնելով այն փաստը, որ նա նախկինում թաքնվել է հետաքննությունից: Այս որոշումն ենթակա էր բողոքարկման տասնհինգ օրվա ընթացքում: Նույն օրը ներկայացվել է մեղադրական եզրակացությունը և ուղարկվել է Արարատի մարզի առաջին ատյանի դատարան: 2007թ. հունիսի 13-ին դիմումատուին կալանքի տակ պահելու 2007թ. փետրվարի 15-ի որոշմամբ սահմանված ժամկետը սպառվել է: 2007թ. հունիսի 15-ին դիմումատուն բողոք է ներկայացրել 2007թ. հունիսի 8-ի որոշման դեմ: Նա նաև դիմել է «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի պետին և պահանջել իրեն ազատ արձակել, քանի որ իր նկատմամբ սահմանված կալանքի ժամկետը լրացել էր 2007թ. հունիսի 13-ին: Նույն օրը Արարատի մարզի առաջին ատյանի դատարանի դատավորը որոշել է քննության առնել դիմումատուի կապակցությամբ հարուցված քրեական գործը: Քրեակատարողական հիմնարկի պետը մերժել է ազատ արձակման մասին դիմումատուի պահանջն այն հիմքով, որ գործն ուղարկվել է առաջին ատյանի դատարան: 2007թ. հունիսի 29-ին դիմումատուն նշված մերժումը բողոքարկել է Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ պնդելով, որ իրեն շարունակաբար կալանքի տակ պահելը անօրինական է: 2007թ. հունիսի 2-ին դատավորը որոշել է դիմումատուի նկատմամբ հարուցված քրեական գործը 2007թ. հունիսի 12-ին նշանակել դատական քննության: Սույն որոշմամբ հաստատվել է, որ դիմումատուի նկատմամբ խափանման միջոց կալանավորումը փոփոխելու կամ չեղյալ հայտարարելու անհրաժեշտություն չկա:

### **Դատարանի գնահատականը**

Դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասը պահանջում է, որ ձերբակալված անձն անհապաղ տարվի դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ: Այս հոդվածը

պարտավորեցնում է դատավորին կամ այլ պաշտոնատար անձին լսել դատարան ներկայացրած անձին: Ավելին, սույն հոդվածն անձին ձեռքակալելուց կամ կալանավորելուց հետո անհապաղ դատարանի կամ այլ պաշտոնատար անձի մոտ տանելու պահանջից հնարավոր բացառություն չի նախատեսում: Այլ կերպ որոշելը կհակասի հոդվածի իմաստային բովանդակությանը: Սույն գործով դիմումատուն կասկածվում էր հանցագործության կատարման մեջ: 2007թ. փետրվարի 15-ին Արարատի մարզի առաջին ատյանի դատարանն անձի նկատմամբ կալանք նշանակելու մասին որոշում էր կայացրել դիմումատուի բացակայությամբ, քանի որ ենթադրվում էր, որ վերջինս գտնվում էր հետախուզման մեջ: Դատարանը նշում է, որ դատարանի հնարավորությունները արդարադատությունից խուսափող անձի ձեռքակալման որոշման հարցը լուծելիս չի հակասում Կոնվենցիայի դրույթներին: Այնուամենայնիվ, 2007թ. ապրիլի 13-ին ոստիկանության կողմից ձեռքակալվելուց հետո և, հետևաբար, վերոնշյալ որոշման հիման վրա կալանավորվելուց հետո նա Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով երբևէ չի տարվել դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ: Դատարանը նաև նշել է, որ հետախուզման մեջ գտնվող անձին ձեռքակալելուց հետո դատարան չներկայացնելու պրակտիկան վճռաբեկ դատարանի կողմից ճանաչվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված երաշխիքների խախտում:

**Հետևաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում:**

#### **ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ**

1. *Վճռել է* որ տեղի է ունեցել կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի խախտում, այն է՝ դիմումատուին 2007թ. հունիսի 13-ից հուլիսի 2-ը ընկած ժամանակահատվածում կալանքի տակ պահելը իրավական հիմք չի ունցել:
2. *Վճռել է* որ տեղի է ունեցել կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտում՝ դիմումատուի ձեռքակալումից հետո դիմումատուն չի ներկայացվել դատարան:
3. *Վճռել է* որ տեղի է ունեցել կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում՝ 2007թ. հունիսի 15-ին կալանքի տակ գտնվելու դեմ դիմումատուի կողմից ներկայացված բողոքը քննելու մերժման առնչությամբ:

**Ասատրյանն ընդդեմ Հայաստանի**

**Խախտում 5-րդ հոդվածի 1-ին կետի գ ենթակետ. Անձնական ազատության իրավունք**

**Առանց դատարանի որոշման դիմումատուին կալանքի տակ պահելը**

ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

2005թ. սեպտեմբերի 23-ին դիմումատուն ձերբակալվել է սպանության փորձի կասկածանքով: 2005թ. սեպտեմբերի 26-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք- Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը դիմումատուի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառում է կալանավորում, որի սկիզբը պետք է հաշվարկվեր սեպտեմբերի 23-ի ժամը 17.50 ընդհանուր: 2005թ. նոյեմբերի 22-ին առաջին ատյանի դատարանը մերժել է դիմումատուին ևս երկու ամսով կալանքի տակ պահելու միջնորդությունը, ինչը դատախազի կողմից բողոքարկվել է վերաքննիչ դատարան: 2005թ. նոյեմբերի 23-ին ժամը 17.30 ընդհանուր վերաքննիչ դատարանը սկսել է դատախազի ներկայացրած բողոքի քննությունը: Դատական նիստը նախ ընդհատվել է դիմումատուի փաստաբանի ուշացման, այնուհետև՝ դիմումատուի առողջական վիճակի վատթարացման պատճառով: Ի վերջո, բժշկի խորհրդով նիստը հետաձգվել է մինչև հաջորդ օրը՝ ժամը 13.00-ն: Թեև դիմումատուի կալանքի ժամկետը ավարտվել էր նոյեմբերի 23-ին՝ ժամը 17.50, սակայն, ազգային անվտանգության աշխատակիցները նրան հարկադրաբար տարել են և մեքենայով տեղափոխել քրեակատարողական հիմնարկ: Ընդ որում, այս ամենը կատարվել է նախագահող դատավորի հետ խորհրդակցական սենյակում աշխատակիցներից մեկի անհատական խորհրդատվության արդյունքում, որի ժամանակ դատավորը ցուցումներ է տվել:

**Եվրոպական դատարանի եզրահանգումները**

Եվրոպական դատարանն արձանագրել է, որ որոշ դեպքերում կարող են լինել ուշացումներ մինչև կալանավորված անձին ազատ արձակելը: Սակայն դա վերաբերում է այն դեպքերին, երբ կալանքի ժամկետը լրացել է դատարանի կարգադրության, այլ ոչ թե օրենքով սահմանված պայմանների արդյունքում: Դատական նիստերի ընթացքից պարզ է դառնում, որ դատարանի նման որոշման կատարումը կարող է լինել ժամանակատար, ինչը սակայն պետք է հասցվի նվազագույնի և ցանկացած դեպքում չգերազանցի մի քանի ժամը: Համադրելով գործի փաստերը և եզրակացնելով, որ դիմումատուն գործնականում հաջողության իրատեսական հնարավորություններ չի ունեցել՝ իրեն ազատ արձակելու

համար քրեակատարողական հիմնարկի վարչակազմի անգործությունը բողոքարկելու, ուստի եվրոպական դատարանը եզրակացրել է, որ 2005թ. նոյեմբերի 23-ին՝ ժամը 17.50-ի և վերաքննիչ դատարանի կողմից 2005թ. նոյեմբերի 24-ին դիմումատուի կալանքն երկարացնելու մասին որոշում կայացնելու միջև ընկած ժամանակահատվածում դիմումատուն շարունակել է մնալ անազատության մեջ՝ չնայած այն փաստին, որ բացակայել է վերջինիս նշված ժամանակահատվածում կալանքի տակ պահելու դատարանի որոշում՝ օրենքով սահմանված կարգի համաձայն: Դրանից հետևում է, որ դիմումատուին ազատությունից զրկելն այդ ժամանակահատվածում եղել է անօրինական:

### ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ

*1 Վճռել է, որ տեղի է ունեցել կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի խախտում, այն է՝ դիմումատուին կալանքի տակ պահելը իրավական հիմք չի ունեցել:*

#### Մալխասյանն ընդդեմ Հայաստանի

*Առանց իրավական հիմքի կալանքի տակ պահելը և կալանքի ժամկետի շարունակական երկարացման վերացական և կարծրատիպային հիմքերի մատնանշում*

#### ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Դիմումատուն ծնվել է 1953 թվականին և ապրում է Երևանում:

2006 թվականի դեկտեմբերի 2-ին դիմումատուն ելույթ է ունեցել «Հայ կամավորների միություն» ՀԿ-ի կողմից կազմակերպված հավաքում: Հավաքը տեղի է ունեցել Երևանի պարարվեստի պետական քոլեջի դահլիճում և դրան մասնակցել է մոտ 150 մարդ: Իր ելույթի մեջ դիմումատուն իշխանություններին կոչել է «ավագակներ և ժողովրդի ներքին թշնամիներ, որոնցից պետք է ազատվել ցանկացած միջոցով, այդ թվում՝ զենքի, զինված պայքարի և ապստամբության»: Նա կոչ է արել արյուն և կրակ թափել թշնամու վրա և պնդել է, որ այլևս վերլուծելու, քննարկելու, մեկնաբանություններ անելու կամ փորձագետների լսելու կարիք չկա: «Երկիրը պետք է ազատագրվի ներքին թշնամուց»: 2006 թվականի դեկտեմբերի 8-ին Ազգային անվտանգության ծառայության (ԱԱԾ) քննչական վարչությունը որոշում է կայացրել ՔՕ-ի 301-րդ հոդվածով քրեական վարույթ հարուցելու մասին՝ վերոնշյալ հավաքի ժամանակ հնչած ելույթներում իշխանությունը բռնի տապալելուն ուղղված հրապարակային կոչեր անելու փաստի առթիվ: 2006 թվականի դեկտեմբերի 12-ին դիմումատուին պաշտոնապես մեղադրանք է առաջադրվել ՔՕ-ի 301-րդ հոդվածի հատկանիշներով՝ իշխանությունը

բռնի զավթելուն ուղղված հրապարակային կոչեր անելու հիմքով: Նույն օրը քննիչը միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին աստյանի դատարան՝ դիմումատուին երկամսյա ժամկետով կալանավորելու վերաբերյալ, պնդելով, որ դիմումատուն, ազատության մեջ մնալով, կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից և անօրինական ազդեցություն գործադրել դատավարության մեջ ներգրավված անձանց նկատմամբ: Դիմումատուն պնդել է, որ քննիչը դատարան է ներկայացրել միայն իր ելույթի վերձանույնը, բայց ոչ դրա ձայնագրությունը, նույնիսկ այն դեպքում, երբ նման ձայնագրությունը գտնվում էր քննիչի տրամադրության տակ: Նույն օրը առաջին աստյանի դատարանը քննել է քննիչի ներկայացրած միջնորդությունը: Առաջին աստյանի դատարանը, քննելով դիմումատուի դեմ ներկայացված մեղադրանքի հիմքում ընկած հանգամանքները, որոշում է կայացրել բավարարել քննիչի ներկայացրած միջնորդությունը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դիմումատուն, ազատության մեջ մնալով, կարող է խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը՝ դատավարության մեջ ներգրավված անձանց վրա ոչ իրավաչափ ազդեցություն գործադրելու ճանապարհով: 2006 թվականի դեկտեմբերի 19-ին դիմումատուն բողոք է ներկայացրել այս որոշման դեմ, պնդելով, որ այն անհիմն է, անօրինական և չպատճառաբանված: 2006 թվականի դեկտեմբերի 26-ին դիմումատուն լրացրել է իր բողոքը, պնդելով, որ քննիչը դատարան որևէ ապացույց չի ներկայացրել, ի հիմնավորումն իր պնդմանն այն մասին, որ ինքը կարող էր թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից կամ խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը: Պնդումն առ այն, որ ինքը կարող էր խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը հերքվում էր այն փաստով, որ վարույթն իրականացնող մարմինն իր տրամադրության տակ ուներ դիմումատուի ելույթի ձայնագրությունը: Նման հանգամանքներում դիմումատուի համար անհնարին էր որևէ կերպ խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը: Դատարանն, այնուամենայնիվ, հաշվի չի առել այդ փաստը: Դիմումատուն այնուհետև պնդել է, որ դատարանի որոշումը՝ նրա հանցանք կատարելու վերաբերյալ, պետք է հիմնված լիներ հիմնավոր կասկածի վրա: Նույն օրը քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը քննել և մերժել է բողոքը: Վերաքննիչ դատարանը գտել է, որ քննիչը բավարար ապացույցներ է ներկայացրել, ինչպիսիք են՝ դիմումատուի 2006 թվականի դեկտեմբերի 10-ի և 12-ի հարցաքննությունների արձանագրությունները, որոնք դիմումատուին կապում են քննարկվող հարցի հիմքում ընկած իրադարձությունների հետ, ինչպես նաև ենթադրում են հիմնավոր կասկածի առկայությունը: Բացի այդ առաջին աստյանի դատարանը օրինական կերպով համարել է, որ բավարար հիմքեր կային ենթադրելու, որ դիմումատուն, ազատության մեջ գտնվելով, կարող է խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը:



2006 թվականի դեկտեմբերի 27-ին դիմումատուն միջնորդություն է ներկայացրել առաջին աստյանի դատարան՝ փորձելով գրավի դիմաց ազատ արձակվել: Նա պնդել է, որ վարույթն իրականացնող մարմինն իրեն ճանաչում է, ինքն ունի մշտական բնակության վայր և երբեք չի խուսափել քննությունից: 2007 թվականի հունվարի 26-ին առաջին աստյանի դատարանը մերժել է դիմումատուի միջնորդությունը՝ այն հիմքով, որ վերջինս, ազատության մեջ մնալով, կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից: 2007թ. հունիսի 5-ին քննիչը գործն ուղարկել է դատարան: Հունիսի 10-ին լրացել է դիմումատուի կալանքի ժամկետը: 2007թ. հունիսի 22-ին դատավորը որոշում է կայացրել դիմումատուի նկատմամբ հարուցված գործը քննության առնելու վերաբերյալ, ինչպես նաև որոշել է դիմումատուի նկատմամբ կիրառված խափանման միջոցը թողնել անփոփոխ:

### **Բ. Դիմումատուի կալանքի ժամկետի երկարացումը**

1. 2007 թվականի փետրվարի 1-ին քննիչը միջնորդություն է ներկայացրել առաջին աստյանի դատարան՝ փորձելով երկարացնել դիմումատուին կալանքի տակ պահելու ժամկետը, որը լրանում էր 2007 թվականի փետրվարի 10-ին, ևս երկու ամսով՝ մինչև հիմքերով: 2007 թվականի փետրվարի 7-ին դիմումատուն առարկություն է ներկայացրել այդ միջնորդության դեմ: Նա պնդել է, որ քննիչը որևէ ապացույց չի ներկայացրել ի հաստատումն այն պնդումների, որ ինքը կթաքնվի քրեական վարույթ իրականացնող մարմնից կամ կխոչընդոտի մինչդատական վարույթում գործի քննությանը: Այնուամենայնիվ, պնդումը, որ ինքը կարող էր թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից չի հաստատվել, քանի որ դիմումատուն ունի մեծ ընտանիք և սեփականություն Հայաստանում և իր անձնագիրն առգրավվել էր: Բացի այդ, այդ պնդումը չէր հաստատվել առաջին աստյանի դատարանի 2006 թվականի դեկտեմբերի 12-ի որոշմամբ: Ինչ վերաբերում է այն պնդմանը, որ ինքը կարող է խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը, ապա դա հերքվել է այն փաստով, որ քննություն իրականացնող մարմինն իր տրամադրության տակ ուներ դիմումատուի ելույթի ձայնագրությունը: Դիմումատուն խնդրել է իրեն գրավի դիմաց ազատ արձակել: Նույն օրը առաջին աստյանի դատարանը քննել է քննիչի միջնորդությունը և որոշում է կայացրել բավարարել քննիչի միջնորդությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մի շարք քննչական գործողությունների իրականացման անհրաժեշտություն կա, ինչպիսիք են Հայաստանի կամավորների միության անդամների հարցաքննությունը, մի շարք փորձաքննություններ ավարտին հասցնելը և Վ. Ա.-ի տիրապետման տակ գտնվող զենքի և ռազմամթերքի ձեռքբերման սկզբնաղբյուրի բացահայտումը և համարելով, որ դիմումատուն, ազատության մեջ գտնվելով, կարող է թաքնվել քրեական վարույթն

իրականացնող մարմնից և խոչընդոտել մինչդասական վարույթում գործի քննությանը՝ դատաքննության մեջ ներգրավված անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու ճանապահով: 2007 թվականի մարտի 30-ին քննիչը միջնորդություն է ներկայացել առաջին աստանի դատարան՝ փորձելով երկարացնել դիմումատուին կալանքի տակ պահելու ժամկետը, որը լրանում էր 2007 թվականի ապրիլի 10-ին, ևս երկու ամսով՝ միննույն հիմքերով: 2007 թվականի ապրիլի 3-ին համապատասխան ընտրական հանձնաժողովը դիմումատուին՝ իր դիմումի հիման վրա, գրանցել է որպես մեծամասնական ընտրակարգով թեկնածու՝ Հայաստանում 2007 թվականի մայիսի 12-ին կայանալիք խորհրդարանական ընտրություններում: 2007 թվականի ապրիլի 5-ին առաջին աստանի դատարանը բավարարել է քննիչի 2007 թվականի մարտի 30-ի միջնորդությունը՝ միննույն հիմքերով, ինչ՝ նախկինում: Դիմումատուի պաշտպանը ներկա է եղել այդ նիստին և փաստարկներ է ներկայացրել: 2007 թվականի հունիսի 5-ին դատախազը հաստատել է մեղադրական եզրակացությունը և գործն ուղարկել է դատարան՝ ըստ էության քննության:

### **Դատարանի գնահատականը**

Դատարանը նշել է, որ 5-րդ հոդվածի 1-ին կետում առկա «օրինական» և «օրենքով սահմանված կարգով» արտահայտություններն ըստ էության հղում են կատարում ներպետական իրավունքին և ամրագրում են այդ իրավունքի նյութաիրավական և ընթացակարգային պահանջները պահպանելու պարտավորությունը: Չնայած այն հանգամանքին, որ ներպետական իրավունքի մեկնաբանման և կիրառման հարցը առաջին հերթին ներպետական իշխանությունների, մասնավորապես՝ դատարանների խնդիրն է, այնուամենայնիվ 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ներպետական օրենսդրության պահանջները չպահպանելը Կոնվենցիայի խախտում է և Դատարանը կարող է ու պետք է քննի, թե արդյոք ներպետական իրավունքի պահանջները պահպանվել են: Կալանավորման ժամկետը սկզբունքորեն «օրինական» է, եթե այն հիմնվում է դատարանի որոշման վրա: Նույնիսկ կալանավորման մասին որոշման թերությունները անհրաժեշտաբար չեն հանգեցնում կալանքի տակ պահելու հիմնական ժամկետի անօրինականությանը՝ 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով: Դատարանը նշել է, որ արդեն քննել է նմանատիպ բողոք ընդդեմ Հայաստանի այլ գործով, որում Դատարանը եզրակացրել է, որ խախտվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետը, նկատի ունենալով, որ դիմումատուին կալանքի տակ պահելը հիմնված չի եղել դատարանի որոշման վրա, հետևաբար անօրինական էր տվյալ դրույթի իմաստով (տե՛ս Պողոսյանն ընդդեմ Հայաստանի գործով վճիռը): Դատարանը սույն գործով եզրակացրել է, որ դիմումատուին 2007 թվականի հունիսի 10-ից 22-ը կալանքի տակ պահելը 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով եղել է անօրինական:

## Համապատասխանաբար, խախտվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետը:

Բացի այդ, դատարանն արձանագրել է, որ հանցագործության համար մեղադրվողը մինչդատական վարույթի ընթացքում միշտ պետք է ազատ արձակվի, քանի դեռ պետությունը չի կարողացել ցույց տալ, որ շարունակական կալանավորման համար գոյություն ունեն «հիմնավոր և բավարար» պատճառներ: Ներպետական դատարանները պետք է քննության առնեն բոլոր փաստերը, որոնք կողմ կամ դեմ են փաստարկում այնպիսի հանրային շահի իրական պահանջի առկայությանը, որը, հաշվի առնելով անձի անմեղության կանխավարկածի սկզբունքը, արդարացնում է անձի ազատությունը հարգելու կանոնից կատարվող շեղումը, և պետք է դրանք ամրագրեն անձին ազատ արձակելու միջնորդությունների վերաբերյալ իրենց որոշումներում: Ազատ արձակելուն կողմ կամ դեմ արված փաստարկները պետք է ընդհանուր և վերացական բնույթ չունենան: Ձերբակալվածի կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածի շարունակական գոյությունը անհրաժեշտ պայման է տևական կալանքի օրինականության համար, սակայն որոշ ժամանակ անց այն դառնում է ոչ բավարար: Նման դեպքերում Դատարանը պետք է պարզի, թե արդյոք դատական մարմինների կողմից ներկայացված այլ հիմքերով շարունակվում է հիմնավորվել ազատությունից զրկելը: Եթե այդօրինակ հիմքերը «հիմնավոր» և «բավարար» են, Դատարանը պետք է պարզի նաև, թե քննությունն իրականացնելիս իրավասու ներպետական մարմինները արդյոք դրսևորել են **«պատշաճ ջանասիրություն»**:

Կոնվենցիայի նախադեպային իրավունքը մշակել է հանցագործության համար կասկածվող անձին մինչև դատավճիռը կալանքի տակ պահելու համար ընդունելի չորս հիմնական հիմքեր, մեղադրյալի դատաքննությանը չներկայանալու վտանգը, վտանգը, որ մեղադրյալը ազատ արձակվելու դեպքում կխոչընդոտի արդարադատության իրականացմանը կամ կկատարի նոր հանցանքներ կամ կկատարի հասարակական անկարգություններ:

Քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու վտանգավորության աստիճանը չի կարող չափվել միայն նախատեսվող պատժի խստության հիման վրա: Այն պետք է գնահատվի մի շարք այլ վերաբերելի գործոնները հաշվի առնելով, որոնք կարող են կա'մ հաստատել քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու վտանգի առկայությունը, կա'մ կարող են այն դարձնել այնքան չնչին, որ հնարավոր չլինի հիմնավորել կալանքը նախքան դատական քննությունը: Քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու վտանգը պետք է գնահատվի այնպիսի հանգամանքների լույսի ներքո, ինչպիսիք են անձի բնութագիրը, նրա բարոյականությունը, տուն ունենալու հանգամանքը, զբաղվածությունը, ունեցվածքը, ընտանեկան կապերը, ինչպես նաև բոլոր

կապերն այն պետության հետ, որում նա հետապնդվում: Ծանր պատժի ակնկալիքը և ապացույցների ծանրակշիռ լինելը կարող են վերաբերելի լինել, սակայն որպես այդպիսին որոշիչ չեն, և հնարավոր է, որ անհրաժեշտ լինի օգտագործել երաշխիքներ ստանալու հնարավորությունը՝ բոլոր վտանգները չեզոքացնելու նպատակով: Մեղադրյալի կողմից վարույթի պատշաճ ընթացքը խոչընդոտելու վտանգի վրա չի կարելի հիմնվել վերացական կարգով (*in abstracto*). այն պետք է հիմնավորել փաստական տվյալներով:

Սույն գործով Դատարանը նշել է, որ ներպետական դատարանները, սանկցավորելով դիմումատուի կալանավորումը և դրա ժամկետի երկարացումը, հիմնվել են վերջինիս՝ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և արդարադատության իրականացմանը խոչընդոտելուն ուղղված գործողություններ ձեռնարկելու ռիսկի վրա, ինչպիսին է, վկաների վրա անօրինական ազդեցություն գործադրելը: Դատարանը նշել է, որ և՛ առաջին ատյանի, և՛ վերաքննիչ դատարանները իրենց որոշումներում սահմանափակվել են այս հիմքերը վերացարկված և կարծրատիպային եղանակով կրկնելով, առանց մատնանշելու որևէ պատճառ այն մասին, թե ինչու են նրանք հիմնավոր համարում իրենց պնդումներն այն մասին, թե դիմումատուն կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից կամ անօրինական ազդեցություն գործադրել վկաների նկատմամբ: Նրանք նաև չեն փորձել հերքել դիմումատուի ներկայացրած փաստարկները:

Դիմումատուին մեղսագրվող արարքի ծանր հանցագործություն լինելու ընդհանուր վկայակոչումը չի կարող բավարար հիմնավորում համարվել ենթադրյալ ռիսկերի համար: Հստակ չէ նաև, թե ինչպե՞ս կարող էր դիմումատուի գործով մյուս մեղադրյալի կալանավորված լինելու փաստը, որի վրա հիմնվել է վերաքննիչ դատարանը՝ գրավի դիմաց ազատ արձակելու վերաբերյալ դիմումատուի միջնորդությունը մերժելիս հիմնավոր լինել քրեական վարույթն իրականացնող մարմնից դիմումատուի թաքնվելու ռիսկն արդարացնելու համար: Վերոնշյալի հաշվառմամբ Դատարանը համարել է, որ այն պատճառները, որոնց վրա՝ իրենց որոշումներում հիմնվել են առաջին ատյանի և քրեական ու զինվորական գործերով վերաքննիչ դատարանը՝ դիմումատուի կալանավորման և դրա ժամկետի երկարացման հետ կապված, «հիմնավոր» և «բավարար» չէին:

**Համապատասխանաբար խախտվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը:**

## **ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴՍԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝**

1. *Վճռել է* որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, նկատի

ունենալով, որ 2007 թվականի հունիսի 10-ից 22-ը դիմումատուին կալանքի տակ պահելը իրավական հիմք չի ունեցել.

2. *Վճռել է* որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում՝ շարունակական կալանավորման հիմնավոր և բավարար պատճառներ չներկայացնելու առումով:

### Մուրադխանյանն ընդդեմ Հայաստանի

*Առանց իրավական հիմքի կալանքի տակ պահելը և քննության մարմինների կողմից ջանասիրության բացակայությամբ պայմանավորված կալանքի ժամկետի շարունակական երկարացման վերացական և կարծրատիպային հիմքերի մատնանշում*

ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Դիմումատուն ծնվել է 1963թ. և կրում է իր պատիժը քրեակատարողական հիմնարկում: Դիմումատուին մեղադրանք է առաջադրվել քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներով, այդ թվում նաև՝ սպանության համար: 2004թ. մայիսի 18-ին դիմումատուն քննիչի միջնորդությամբ կալանավորվել է երկու ամիս ժամկետով: Այնուհետև, 2004թ. հուլիսի 12-ի որոշմամբ նրա կալանքը երկարացվել է երկու ամիս ժամկետով: Նախաքննության ավարտից և դիմումատուի գործը դատական քննության փոխանցելուց հետո՝ 2004թ. հոկտեմբերի 6-ին, առաջին ատյանի դատարանն իր նախաձեռնությամբ և քր. դատ. օր. 293-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով երկարաձգել է կալանքի ժամկետը: 2005թ. հոկտեմբերի 14-ին գործը քննող դատարանը որոշել է գործն ուղաքրկել լրացուցիչ նախաքննության: Նույն որոշմամբ դատարանը որոշել է դիմումատուին պահել կալանքի տակ: Վերաքննիչ և վճռաբեկ դատարանները վերոնշյալ որոշումը թողել են ուժի մեջ համապատասխանաբար՝ նոյեմբերի 9-ին և դեկտեմբերի 16-ին: 2005թ. դեկտեմբերի 26-ին գործի նյութերն ուղարկվել են գլխավոր դատախազություն և 2005թ. դեկտեմբերի 27-ին քննիչը միջնորդություն է ներկայացրել կալանքի ժամկետը երկու ամսով երկարաձգելու համար, որը 2005թ. դեկտեմբերի 29-ին դատարանի կողմից բավարարվել է:

### **Դատարանի իրավական գնահատականը**

***ՈՆՎԵՆՏԻԱՅԻ 5-Ը ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԽԱՎՏՈՒՄԸ***

Դիմումատուն գանգատ է ներկայացրել, որ 2005թ. դեկտեմբերի 29-ի որոշմամբ իր կալանքի ժամկետի

**երկարացումը եղել է անօրինական, քանի որ որոշումից առաջ իր կալանքը հիմնված չի եղել դատարանի որոշման վրա, ինչը պահանջվում է օրենքով: Նա վկայակոչել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետը:**

Դատարանը նշել է, որ դատական վարույթի ընթացքում դիմումատուի կալանքը սկսվել է 2004թ. հոկտեմբերի 6-ին: Դատարանը որևէ պատճառ չունի կասկածի տակ դնելու այդ որոշման օրինականությունը, որով թույլատրվել էր կալանքի այն ժամկետը, որը կայացվել էր այդ օրը առաջին աստյանի դատարանի կողմից ՔԴՕ-ի 293-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով: Այնուամենայնիվ, 2005թ. հոկտեմբերի 14-ին առաջին աստյանի նույն դատարանը իր իսկ նախաձեռնությամբ, որոշել էր գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության: Դատարանն այս կապակցությամբ նշում է, որ Կառավարության հայտարարությունն այն մասին, թե մինչդատական վարույթը վերսկսվել էր ոչ թե այդ օրը, այլ այն օրը, երբ այդ որոշումը ուժի մեջ է թողնվել 2005թ. դեկտեմբերի 16-ին բարձրագույն աստյանի դատարանի կողմից, չի հիմնավորվում ներպետական որևէ իրավական նորմով: Իսկապես, քրեական դատավարության օրենսգրքում ոչ մի իրավական նորմ չկա, որը հստակ սահմանում է մինչդատական վարույթի վերսկսման օրը, երբ գործն ուղարկվում է լրացուցիչ նախաքննության: Այսպիսով, պարզ չէ, թե 2005թ. հոկտեմբերի 14-ից դեկտեմբերի 16-ը դիմումատուի գործի նկատմամբ կալանքի ինչ նորմեր են կիրառելի եղել՝ մինչդատական, թե դատական վարույթների վերաբերյալ նորմերը: Հետևաբար, հնարավոր չէ պնդել, որ այդ ժամանակահատվածում դիմումատուի կալանքը հիմնված է եղել պարզ և կանխատեսելի նորմերի վրա:

Վերոնշյալ նկատառումները Դատարանի համար բավարար են եղել եզրահանգելու, որ դիմումատուին կալանքի տակ պահելու որոշ ժամանակահատված չի համապատասխանում Կոնվենցիայով սահմանված օրինականության պահանջներին: Դա պայմանավորված էր կալանքի ընթացակարգը կարգավորող հստակ նորմերի բացակայությամբ, երբ առաջին աստյանի դատարանը կայացնում էր գործը լրացուցիչ նախաքննության ուղարկելու մասին որոշում:

**Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:**

### ***ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ԿԵՏԻ ԽԱԽՏՈՒՄԸ***

*Դիմումատուն գանգատվել է, որ իր շարունակական կալանքը խախտել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված երաշխիքները, որը սահմանում է.*

«3. Մույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխանձերբակալված կամ

կալանավորված յուրաքանչյուր որ...ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակվելը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով»: Դատարանն ընդունել է, որ գործը բավական բարդ է, որը պահանջում էր բազմաթիվ քննչական գործողությունների կատարում: Այնուամենայնիվ, հաշվի առնելով դիմումատուի ազատությունից զրկված լինելը՝ իշխանությունները պետք է գործեին հատուկ ջանասիրությամբ, ինչը նրանք չեն կատարել: Այս առումով Դատարանը նշել է, որ վարույթի էական և անհարկի ձգձգումը վերագրելի է իշխանությունների վարքագծին: Մասնավորապես, քննչական մարմնի կողմից վարույթի սկզբնական փուլում օբյեկտիվ և բազմակողմանի քննություն չանցկացնելու պատճառով դատարանը, որին գործն ըստ էության քննության էր հանձնվել, ստիպված էր մի ամբողջ տարվա ընթացքում անցկացնել է 52 դատական նիստ և քննել բազմաթիվ վկաների գուտ այն բանի համար, որպեսզի վերջում եզրահանգեր, որ անկարող է որոշում ընդունել դիմումատուի մեղավորության կամ անմեղության վերաբերյալ և ստիպված է եղել գործն ուղարկել լրացուցիչ նախաքննության: Ավելին, այդպիսի որոշման ընդունումը բողոքարկման ընթացակարգ սկսելու պատճառ է հանդիսացել և հանգեցրել է վարույթի ձգձգմանը՝ նվազագույնը երկու ամսով:

Վերջապես, ոչ մի պատճառաբանություն չի տրվել 2006թ. հունիսի 2-ից մինչև հոկտեմբերի 16-ի չորս ամսվա ընդմիջման համար, որի ընթացքում բացարձակապես ոչ մի վարույթ չի իրականացվել: Այսպիսով, իշխանությունների կողմից ջանասիրության բացակայության պատճառով դիմումատուի կալանքը ընդհանուր առմամբ նվազագույնը մեկ ու կես տարով ձգձգվել է:

Վերոնշյալ նկատառումները բավարար են եղել Դատարանի կողմից եզրահանգելու համար, որ դիմումատուն պահվել է շարունակական կալանքի տակ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված «ողջամիտ ժամկետի» պահանջի խախտմամբ:

Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում:

#### *ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴՍՏԱՐԱԸ ՄԻԱԶՄՅՆ*

1. Վճռել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:
2. Վճռել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում:

#### Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի

Առանց իրավական հիմքի կալանքի տակ պահելը և կալանքի ժամկետի շարունակական երկարացման վերացական և կարծրատիպային հիմքերի մատնանշում

## ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Դիմումատուն ծնվել է 1967 թվականին և ապրում է Երևանում, քաղաքացիական հասարակության ակտիվ անդամ է և առաջատար պաշտոններ է զբաղեցրել մի շարք հասարակական կազմակերպություններում, այդ թվում նաև՝ Հայ կամավորների միությունում, «Ազատագրված տարածքների պաշտպանություն»-ում և Արաքս-Կուր բարեգործական հիմնադրամում: Դիմումատուն ծագումով հայ է և ակնհայտորեն մշտական բնակություն է ունեցել Հայաստանում 1992 թվականից ի վեր՝ ունենալով այստեղ ընտանիք և հանդիսանալով բնակարանի սեփականատեր: Դիմումատուն հանդես է եկել որպես Հայաստանի իշխանություններին քննադատող անձ: Դիմումատուի պնդմամբ՝ այս կապակցությամբ նրան մի քանի անգամ կանչել են ազգային անվտանգության ծառայություն (ԱԱԾ), որտեղ նրան կարգադրել են դադարեցնել ընդդիմության հետ իր համագործակցությունը և կառավարության դեմ ուղղված քննադատությունները: ԱԱԾ սահմանադրական կարգի պահպանության եւ ահաբեկչության դեմ պայքարի գլխավոր վարչության պետը չհստակեցված ամսաթվին միջնորդություն է ներկայացրել դատարան դիմումատուի հեռախոսային խոսակցությունների և այլ հաղորդումների լսում և ձայնագրություն իրականացնելու նպատակով: 2006 թվականի օգոստոսի 15-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքի ընդհանուր իրավասության դատարանը քննել է միջնորդությունը և բավարարվել է դիմումատուի երեք բջջային և երեք ֆիքսված հեռախոսային ցանցերից էլքագրվող և մուտքագրվող հեռախոսային խոսակցությունները և այլ հաղորդումները վեց ամիս ժամկետով լսելու և ձայնագրելու մասին միջնորդությունը՝ հաշվի առնելով, որ դրանք կարող են պարունակել վերոնշյալ փաստական հանգամանքները հիմնավորող այնպիսի տեղեկություններ, որոնց օգտագործումը դյուրին կդարձնի հանցագործության բացահայտումը և ապացույցների ձեռք բերումը, քանի որ դիմումատուի գործողություններում առկա են եղել Քրեական օրենսգրքի (ՔՕ) 301-րդ հոդվածով սահմանված հանցավոր արարքի տարրեր: Ընդհանուր իրավասության դատարանը հղում է կատարել, մասնավորապես, քրեական դատավարության օրենսգրքի (ՔԴՕ) 281-րդ և 284-րդ հոդվածներին: 2006 թվականի դեկտեմբերի 2-ին դիմումատուն ելույթ է ունեցել հայ կամավորների միության կողմից կազմակերպված հավաքի ժամանակ: Հավաքը կայացել է Երևանի պարավետսի պետական ուսումնարանի դահլիճում, որին մասնակցել է շուրջ հարյուր հիսուն մարդ: Դիմումատուն կոչ է արել հավաքի մասնակիցներին կազմակերպված լինել, այլապես ոչինչ չէր կարող ստացվել: Նա կոչ է արել մասնակիցներին ստեղծել հավաքական մի ուժ, որպեսզի հնարավոր լինի ստիպել իշխանությանը հրաժարական տալ՝ մատնանշելով, որ միակ և հիմնական նպատակը նրանցից ազատվելն էր:

Այնուհետև նա շեշտել է, որ նրանք չպետք է թույլ տան իշխանության գլուխ կանգնածներին շատանալ, քանի որ, հակառակ դեպքում, հավաքի մասնակիցների ապագա ծրագրերի համար լուրջ խոչընդոտներ ի հայտ կգան: Դիմումատուն իշխանություններին անվանել է «հրեշներ», որոնք կդառնան է՛լ ավելի վտանգավոր, եթե նրանց թույլ տան շատանալ: Դիմումատուն համակարծիք է եղել մյուս ելույթ ունեցողների հետ այն առումով, որ նպատակին հասնելու համար թույլատրելի է ցանկացած միջոց: 2006 թվականի դեկտեմբերի 8-ին Ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունը որոշում է կայացրել ՔՕ-ի 301-րդ հոդվածով քրեական վարույթ հարուցելու մասին՝ վերոնշյալ հավաքի ժամանակ հնչած ելույթներում պետական իշխանությունը բռնի



տապալելուն ուղղված հրապարակային կոչեր անելու փաստի առթիվ: 2006 թվականի դեկտեմբերի 9-ին, ժամը 22:30-ին դիմումատուն ձերբակալվել է և բերման ենթարկվել ԱԱԾ: Նույն ամսաթվին խուզարկվել է դիմումատուի գրասենյակը, որի արդյունքում հայտնաբերվել է մեկ ատրճանակ և տարբեր տեսակի փամփուշտներ: 2006 թվականի դեկտեմբերի 10-ին, ժամը 15:45-ին կազմվել է ձերբակալման արձանագրությունը: Արձանագրության մեջ նշված է եղել, որ դիմումատուն կասկածվում է ՔՕ-ի 235-րդ հոդվածի 1-ին կետով և 301-րդ հոդվածով նախատեսված հանցանքների կատարման մեջ: Պարզվում է, որ դիմումատուի անձնագիրը առգրավվել է: Նույն ամսաթվին դիմումատուն հարցաքննվել է որպես կասկածյալ: Հրաժարվելով ցուցմունք տալ՝ նա նշել է, որ իր դեմ հարուցված քրեական վարույթը պայմանավորված է քաղաքական շարժառիթներով: 2006 թվականի դեկտեմբերի 12-ին դիմումատուին պաշտոնապես մեղադրանք է առաջադրվել ՔՕ-ի 235-րդ հոդվածի 1-ին կետով և 301-րդ հոդվածով: Նա մեղադրվել է պետական իշխանությունը բռնի տապալելուն ուղղված հրապարակային կոչեր անելու մեջ և 1998 թվականին գորացրվելուց հետո իր զենքը ապօրինաբար պահելու և չհանձնելու մեջ: Դիմումատուի հետ միասին ՔՕ-ի 301-րդ հոդվածով մեղադրվել է նաև մեկ այլ անձ՝ Վ.Ս.-ն, որը նույնպես ելույթ է ունեցել վերոնշյալ հավաքի ժամանակ: Նրանց ելույթները ձայնագրված են եղել: Նույն ամսաթվին քննիչը միջնորդություն է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ դիմումատուին երկամսյա ժամկետով կալանավորելու վերաբերյալ՝ հիմնավորելով, որ դիմումատուն, ազատության մեջ մնալով, կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից և խոչընդոտել գործի քննությանը: Պարզվել է, որ նույն ամսաթվին խորհրդարանի երեք անդամ ներկայացրել են դիմում ընդհանուր իրավասության դատարան, որում իրենց անձնական երաշխավորությունն են ներկայացրել դիմումատուի պատշաճ վարքագծի մասին՝ հայցելով, որ կալանավորումը չկիրառվի որպես խափանման միջոց: Նույն ամսաթվին ընդհանուր իրավասության դատարանը քննության է առել քննիչի կողմից ներկայացված միջնորդությունը, ներառյալ մեղադրանքը և դրան առնչվող հանգամանքները: Ընդհանուր իրավասության դատարանը որոշել է բավարարել միջնորդությունը հաշվի առնելով մեղսագրվող արաքի բնույթը և վտանգավորության աստիճանը և այն հանգամանքը, որ մեղսագրվող արարքը պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների ցանկում առաջին տեղում էր, ինչպես նաև համարելով, որ գործի նյութերը բավարար հիմքեր էին տալիս ենթադրելու, որ դիմումատուն կարող էր թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից և խոչընդոտել գործի քննությունը՝ գործադրելով անօրինական ազդեցություն վարույթում ներգրավված անձանց վրա: 2006 թվականի դեկտեմբերի 19-ին դիմումատուն բողոք է ներկայացրել պատճառաբանելով, մասնավորապես, որ չկային հիմնավոր կասկածներ իր կողմից հանցանք կատարելու վերաբերյալ և որ ընդհանուր իրավասության դատարանը չէր ներկայացրել այն պատճառները, որոնք կհիմնավորեին իրեն՝ կալանքի տակ պահելու անհրաժեշտությունը: Նա պնդել է, մասնավորապես, որ նախաքննության մարմնի մոտ էր գտնվում իր բացատրությունների ձայնագրությունը, և այն պնդումը, որ դիմումատուն կարող էր անօրինական ազդեցություն գործադրել վկաների վրա, անհիմն էր: Ավելին, պնդումն առ այն, որ նա կարող էր թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, հիմնավորված չէր որևէ փաստարկով կամ ապացույցով, մինչդեռ դատարանը հաշվի չէր առել այն հանգամանքը, որ դիմումատուն մշտական բնակություն ունի Հայաստանում և նրա խնամքին են գտնվում երկու անչափահաս երեխաները և մեծահասակ մայրը, որը վատառողջ է: 2006 թվականի դեկտեմբերի 27-ին քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը մերժել է դիմումատուի բողոքը: 2007 թվականի փետրվարի 1-ին քննիչը միջնորդություն է

ներկայացրել ընդհանուր իրավասության դատարանի դիմումատուի կալանքի ժամկետը, որը լրանում էր 2007 թվականի փետրվարի 10-ին, երկու ամսով երկարաձգելու համար: Քննիչը պատճառաբանել է, որ դիմումատուն կարող էր թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, քանի որ օտարերկրյա քաղաքացի էր: Այնուհետև, նա պատճառաբանել է, որ 2007 թվականի հունվարի 15-ին դիմումատուն իր պաշտպանի միջոցով փոխանցել էր կարճ երկտող նույն գործով մեղադրվող Վ.Ա.-ին, որում ասվում էր՝ «պինդ կաց»: Սրանից ենթադրվում էր, որ դիմումատուն փորձում էր անօրինական ազդեցություն գործադրել վարույթի մասնակիցների վրա: 2007 թվականի փետրվարի 7-ին ընդհանուր իրավասության դատարանը, քննության առնելով քննիչի միջնորդությունը և մյուս նյութերը, բավարարել է միջնորդությունը՝ համարելով, որ անհրաժեշտություն էր առաջացել ձեռնարկելու հետագա քննչական միջոցներ և մատնանշել է այն նույն հիմքերը, որոնցով նախկինում հիմնավորել էր դիմումատուի շարունակական կալանքը: 2007 թվականի մարտի 30-ին քննիչը միջնորդություն է ներկայացրել ընդհանուր իրավասության դատարան՝ դիմումատուի կալանքի ժամկետը, որը լրանում էր 2007 թվականի ապրիլի 10-ին, նույն հիմնավորումներով երկու ամսով երկարաձգելու համար: 2007 թվականի ապրիլի 4-ին ընդհանուր իրավասության դատարանը քննության է առել և բավարարել է այս միջնորդությունը նույն հիմնավորումներով:

#### **Դատարանի իրավական գնահատականը**

Քննարկվող գործով դատարանը նշել է, որ կալանքի կիրառման և կալանքի տակ պահելու երկարատև ժամկետի հետ կապված արդեն իսկ քննել է համանման բողոք Հայաստանի դեմ բերված մեկ այլ գործում (Պողոսյանն ընդդեմ Հայաստանի), որում եկել է եզրահանգման, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, քանզի դիմումատուի նկատմամբ կալանքը չի կիրառվել դատարանի որոշման հիման վրա և, հետևաբար, եղել է անօրինական նշյալ դրույթի իմաստով: Դատարանը չի տեսնում սույն գործով այլ եզրահանգում կատարելու որևէ պատճառ և եզրակացնում է, որ դիմումատուի նկատմամբ 2007 թվականի հունիսի 10-ից 22-ն ընկած ժամանակահատվածում կիրառված կալանքը 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով եղել է անօրինական:

**Համապատասխանաբար, խախտվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետը:**

**Բացի այդ, դատարանն արձանագրել է նաև 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում՝ կապված կալանքի կիրառման երկարատևության անհիմն լինելու հետ՝ մատնանշելով ընդդեմ Հայաստանի արդեն իսկ կայացված վճիռը:**

#### **ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ԲԴ ՀՈՂՎԱԾԻ 4-ԲԴ ԿԵՏԻ ԽԱՎՏՈՒՄ**

Դիմումատուն բողոք է բերել առ այն, որ 2007 թվականի փետրվարի 7-ին ընդհանուր

իրավասության դատարանում վարույթը մրցակցային չի եղել, և որ իրեն զրկել են 2007 թվականի մայիսի 14-ին վերաքննիչ դատարանում տեղի ունեցած բանավոր լսումների հնարավորությունից: Նա վկայակոչել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը: Դատարանը որոշեց քննել այս գանգատները Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի ներքո, որը վերաբերելի մասով սահմանում է հետևյալը՝

«4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն

Դատարանը վերահաստատում է, որ 5-րդ հոդվածի 4-րդ կետը պահանջվում է, որպեսզի կալանքի դեմ բերված բողոքը քննելիս դատարանը ապահովի դատական քննության երաշխիքները: Քննությունը պետք է լինի մրցակցային, և միջոտ պետք է ապահովվի «կողմերի հավասարությունը» մեղադրանքի կողմի և կալանավորված անձի միջև: Կողմերի հավասարությունն ապահովված չի համարվում, եթե պաշտպանին մերժում են տրամադրել գործով նախաքննությամբ ձեռք բերված այն փաստաթղթերը, որոնք կարևոր են նրա պաշտպանյալին կալանքի տակ պահելու օրինականությունը արդյունավետորեն վիճարկելու: Այս սկզբունքը կարող է նաև դատարանից պահանջել հարցաքննել այն վկաներին, որոնց ցուցմունքները առերևույթ կարող են էական ազդեցություն ունենալ կալանքը երկարացնելու հիմքերի օրինականության վրա: Անդրադառնալով քննարկվող գործի հանգամանքներին Դատարանը նշել է, որ քննիչը 2007 թվականի փետրվարի 1-ին միջնորդություն է ներկայացրել ընդհանուր իրավասության դատարան՝ պահանջելով երկարացնել դիմումատուի կալանքի ժամկետը: Ի հիմնավորումն սույն միջնորդության՝ քննիչը ներկայացրել է գործի նյութերում առկա որոշ ապացույցներ, որոնք չեն տրամադրվել դիմումատուի պաշտպաններին, և նրանք չեն կարողացել որևէ մեկնաբանություն անել դրանց վերաբերյալ կամ վիճարկել այդ ապացույցները: Հաջորդ անգամ կալանքի հարցի քննության ընթացքում այս փաստն ընդունվել է ընդհանուր իրավասության դատարանի կողմից: Կառավարությունը նույնպես ընդունել է սա, սակայն փորձել է դա հիմնավորել այն փաստով, որ ներպետական իրավունքով արգելվում է գործի նյութերը պաշտպանության կողմին տրամադրել մինչև նախաքննության ավարտը: Դատարանը եզրակացրել է, որ ներպետական իրավունքն այս առումով չափազանց մեծ սահմանափակում է նախատեսում: Ինչպես արդեն նշվել է նախորդ կետում, իր վստահորդին վերաբերող պնդումների հիմքը և նրան կալանքի տակ պահելու օրինականությունը արդյունավետորեն վիճարկելու նպատակով պաշտպանության կողմին պետք է տրամադրվեն գործին առնչվող առնվազն այն նյութերը, որոնք վերջինիս անհրաժեշտ են դա անելու համար, այդ թվում նաև՝ արդարացնող ապացույցները, որոնք ևս

պետք է տրամադրվեն պաշտպանության կողմին: Այս առումով Դատարանը տարբերակում է դնում քրեական գործի բոլոր նյութերի միջև, որոնք 6-րդ հոդվածի ներքո, որպես ընդհանուր կանոն, պետք է բացահայտվեն անձին մեղավոր ճանաչելու հարցը որոշելու համար, և այն նյութերի միջև, որոնք պետք է տրամադրվեն 5-րդ հոդվածի 4-րդ կետի ներքո նախատեսվող վարույթի առնչությամբ: Այնուամենայնիվ, սույն գործի պարագայում դա տեղի չի ունեցել: Ուստի Դատարանը եզրակացրել է, որ այն ընթացակարգով, որով 2007 թվականի փետրվարի 7-ին իրականացվել է վարույթը ընդհանուր իրավասության դատարանում, մրցակցության սկզբունքը և կողմերի հավասարությունը չեն երաշխավորվել:

**Համապատասխանաբար, այս առումով խախտվել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետը:**

### ***ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻՍՁԱՅՆ***

1. *Վճռել է* որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:
2. *Վճռել է* որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում:
3. *Վճռել է* որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի խախտում:

### **Մինապանն ընդդեմ Հայաստանի**

**Առանց իրավական հիմքի կայանքի տակ պահելը և կայանքի նկատմամբ դատական վերահսկողության մերժումը միայն այն հիմքով, որ գործն արդեն մինչդատական վարույթում չէ:**

### **ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ**

Դիմումատուն ծնվել է 1974 թվականին և ապրում է Երևանում: 2007 թվականի դեկտեմբերի 18-ին քրեական գործ է հարուցվել՝ հիմք ընդունելով այդ օրը հրազենի կիրառմամբ անձանց երկու խմբերի միջև տեղի ունեցած կոիվը: Կովի արդյունքում զոհվել է մեկ անձ, ևս երկուսը վիրավորվել են: Կովին մասնակցելուց հետո դիմումատուն թաքնվել է, և նրա դեմ հետախուզում է հայտարարվել: 2007 թվականի դեկտեմբերի 22-ին դիմումատուն ինքնակամ ներկայացել է ոստիկանություն: Նա հանձնել է իր երկու ասորձանակները և նշել, որ դրանք օգտագործել է կովի ընթացքում անհայտ անձանց հարձակումից պաշտպանվելու նպատակով: Նրան ձերբակալել են և արգելանքի վերցրել: 2007 թվականի դեկտեմբերի 25-ին դիմումատուին մեղադրանք է առաջադրվել քրեական օրենսգրքի 104-րդ

հողվածի 2-րդ մասի 6-րդ կետով՝ ծանրացնող հանգամանքներով սպանությունը, ՔՕ 112-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ծանրացնող հանգամանքներով դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը, ինչպես նաև ՔՕ 235-րդ հոդվածի 1-ին մասով՝ ապօրինի կերպով հրազեն պահելը: Նույն օրը քննիչը դիմել է Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ դիմումատուին երկու ամսով կալանքի տակ վերցնելու պահանջով: Նշվել է, որ 2007 թվականի դեկտեմբերի 18-ին դիմումատուն ապօրինի կերպով պահած ատրճանակներով, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով կրակ է բացել Գ.Ս.-ի, Ռ.Վ.-ի և Վ. Հ.-ի վրա, որի արդյունքում ապօրինաբար և դիտավորությամբ կյանքից զրկել է Գ.Ս.-ին, ինչպես նաև ծանր վնասվածք պատճառել Ռ.Վ.-ին և Վ. Հ.-ին: Գանգատում այնուհետև նշվում է, որ դիմումատուին անհրաժեշտ է եղել կալանավորել, քանի որ նա ծանր հանցագործություն է կատարել: Նույն օրը Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը որոշել է բավարարել միջնորդությունը և դիմումատուին կալանավորել երկու ամիս ժամկետով՝ 2007 թվականի դեկտեմբերի 22-ից մինչև 2008 թվականի փետրվարի 22-ը: Դատարանը գտել է, որ դիմումատուն կարող է թաքնվել վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել գործի քննությանը, խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատժի կրումից, ինչպես նաև խոչընդոտել դատավճռի կատարմանը:

2008թ. հուլիսի 4-ին քննիչը որոշել է հրաժարվել դիմումատուին առաջադրված մեղադրանքների մի մասից, իսկ մյուս մասը փոփոխել: 2008 թվականի հուլիսի 11-ին քննիչը դիմել է դիմումատուի կալանքի ժամկետը երկու ամսով երկարաձգելու պահանջով: 2008 թվականի հուլիսի 17-ին ընդհանուր իրավասության դատարանը, ուսումնասիրելով քրեական գործի նյութերը, որոշել է մասամբ բավարարել պահանջը և դիմումատուի կալանքի ժամկետը երկարաձգել մեկ ամիս ժամկետով՝ մինչև 2008 թվականի օգոստոսի 22-ը, այն նույն հիմքերով, որոնք վկայակոչվել էին իր նախկին որոշումներում: 2008թ. սեպտեմբերի 17-ին ընդհանուր իրավասության դատարանը բավարարել է պահանջը և երկարաձգել է դիմումատուի կալանքի ժամկետը մինչև 2008 թվականի հոկտեմբերի 7-ը՝ հաշվի առնելով վերագրվող հանցանքի բնույթը և վտանգավորության աստիճանը, գործի փաստական հանգամանքները, ինչպես նաև այն հանգամանքը, որ դիմումատուն ազատության մեջ մնալու դեպքում կարող էր թաքնվել վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել քննությանը կամ խուսափել քրեական պատասխանատվությունից: 2008թ. սեպտեմբերի 22-ին դիմումատուն բողոք է ներկայացրել: Այդ ընթացքում գործի նախնական քննությունն ավարտվել է, և 2008 թվականի հոկտեմբերի 1-ին դիմումատուի գործը դատաքննության նպատակով ուղարկվել է դատարան: 2008 թվականի հոկտեմբերի 7-ին վերաքննիչ քրեական դատարանը որոշել է առանց քննության թողնել 2008 թվականի սեպտեմբերի 22-ին ներկայացված բողոքն այն հիմքով, որ մինչդասուսկան վարույթի

նկատմամբ դատական վերահսկողության շրջանակները սահմանափակված են եղել գործի քննության փուլով: Քանի որ քննությունն ավարտված է եղել, և գործն ուղարկվել է դատարան, կալանքի օրինականության և վավերականության հարցերի ուսումնասիրությունն այլևս թողնված է եղել դատարանի հայեցողությանը:

#### **Դատարանի գնահատականը**

**Դատարանը նշել է, որ արդեն քննել է համանման բողոք Հայաստանի դեմ բերված մեկ այլ գործում, որում եկել է եզրահանգման, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում, քանզի դիմումատուի նկատմամբ կալանքը չի կիրառվել դատարանի որոշման հիման վրա և, հետևաբար, եղել է անօրինական՝ նշյալ դրույթի իմաստով (տե՛ս Պողոսյանն ընդդեմ Հայաստանի: Մալխասյանն ընդդեմ Հայաստանի, և Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի):** Դատարանը չի տեսել սույն գործով այլ եզրահանգում կատարելու որևէ պատճառ և եզրակացնում է, որ դիմումատուի՝ 2008 թվականի հոկտեմբերի 7-ից 15-ն ընկած ժամանակահատվածում կալանքը եղել է անօրինական 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով:

Դատարանը վերահաստատել է, որ իր նախադեպային իրավունքին համապատասխան՝ 5-րդ հոդվածի 4-րդ կետը, 6-րդ հոդվածի 1-ին կետի նման, ապահովում է դատարանի մատչելիության իրավունքը, որը կարող է ենթարկվել միայն այնպիսի ողջամիտ սահմանափակումների, որոնք չեն խախտում դրա էությունը :

**Դատարանը նշում է, որ այն արդեն նման բողոք քննել է Հայաստանի դեմ, որտեղ սահմանվել է, որ դիմումատուի կալանքի նկատմամբ դատական վերահսկողության մերժումը միայն այն հիմքով, որ գործն արդեն մինչդատական վարույթում չէ, նրա՝ 5-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան վարույթ հարուցելու իրավունքի ոչ արդարացված սահմանափակում է և եզրակացրել է, որ տեղի է ունեցել այդ դրույթի խախտում:**

Սույն գործի հանգամանքները նույնական են նախկինում ընդդեմ Հայաստանի հարուցված վերոնշյալ գործերի հանգամանքներին: Հետևաբար, Դատարանը որևէ պատճառ չի գտնում այլ եզրակացություն կատարելու համար:

## ***Հողված 6. Արդար Դատաքննության իրավունք***

### **Հարությունյանն ընդդեմ Հայաստանի**

### **Բռնության կիրառմամբ ստացված ապացույցների օգտագործումը մեղադրանքի հիմքում**

ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Դիմումատուն ծնվել է 1980թ. և ապրում է Երևան քաղաքում: 1998թ. հունիսի 25-ին դիմումատուն զորակոչվել է և զինվորական ծառայության է նշանակվել Ադրբեջանի հետ սահմանին կից տեղակայված թիվ 33651 զորամասում: 1998թ. դեկտեմբերի 3-ին դիմումատուն և թվով հինգ այլ զինծառայողներ գտնվել են թիվ 24 մարտական դիրքում հերթափոխության մեջ: 1998թ. դեկտեմբերի 4-ին հերթափոխության մեջ գտնվող վեց զինծառայողներից մեկի՝ զինծառայող Հ.-ի դիակը հայտնաբերվել է մոտակա խրամատում, վերջինս մահացել էր գնդակային հրազենային վնասվածքից: Սպանության կատարման ժամանակ, մնացած հինգ զինծառայողներից միայն երեքն են գտնվել թիվ 24 մարտական դիրքի մոտակայքում, մասնավորապես՝ դիմումատուն և զինծառայողներ Ս.-ն և Ա.-ն: Վերջին երկու զինծառայողները դիրքից ոչ հեռու վառելափայտ էին կոտրում: Ըստ երևույթին, նույն օրն ավելի վաղ դիմումատուի և զինծառայող Հ.-ի միջև վիճաբանություն է տեղի ունեցել: Դիմումատուն և զինծառայողներ Ս.-ն և Ա.-ն ձերբակալվել են, նրանց նկատմամբ ցուցաբերվել է վատ վերաբերմունք, 1999թ. մարտի 4-ին զինծառայողներ Ս.-ն և Ա.-ն բերման են ենթարկվել ռազմական ոստիկանության ստորաբաժանում, իսկ մարտի 5-ին ռազմական ոստիկանության նույն ստորաբաժանում է բերվել նաև դիմումատուն: Ռազմական ոստիկանության աշխատակիցները ծեծի են ենթարկել նրանց՝ փորձելով կորզել զինծառայող Հ.-ի սպանությունը հիմնավորող ցուցմունքներ: Ըստ դիմումատուի նրանք ասել են ոստիկանության աշխատակիցներին, որ զինծառայող Հ.-ն հավանաբար սպանվել է սահմանի մյուս կողմից արձակած կրակոցից, որին ոստիկանության աշխատակիցները պատասխանել են, որ արդեն հաստատվել է, որ զինծառայող Հ.- ի վրա կրակել են մոտ տարածությունից և շարունակել են ծեծել նրանց: Ոստիկանության աշխատակիցները դիմումատուին նախ ծեծել են բռունցքներով և ոտքերով: Հետո ոստիկանության աշխատակիցները սկսել են ծեծել նրան զինվորական մահակով: Մի քանի անգամ դիմումատուն կորցրել է գիտակցությունը, սակայն նրա գիտակցությունը վերականգնել են և շարունակել ծեծել վերջինիս: Այդ ամենից հետո ոստիկանության աշխատակիցները սկսել են հարթաշուրթերով սեղմել են դիմումատուի եղունգները: Խոշտանգումների նույն եղանակները կիրառվել են նաև զինծառայողներ Ս.-ի և Ա.-ի նկատմամբ: 1999թ.

մարտի 5-ին զինծառայող Ս.-ն ցուցմունք է տալիս քննիչին այն մասին, որ նա ականատես է եղել, թե ինչպես է դիմումատուն վերցրել իր ինքնաձիգը և կրակել զինծառայող Հ.-ին: Քանի որ սպանության կատարման ժամանակ զինծառայող Ա.-ն և Ս.-ն եղել են միասին, Ա.-ին հարկադրել են ցուցմունք տալ այն մասին, որ զինծառայող Ս.-ն հայտնել է իրեն սպանությանը ականատես լինելու մասին: Ոստիկանության աշխատակիցները շարունակել են խոշտանգել դիմումատուին՝ հարկադրելով նրան խոստովանել սպանությունը կատարած լինելու փաստը: Ըստ դիմումատուի նման վերաբերմունքը շարունակվել է ավելի քան մեկ ամիս: Նա անկարող էր քայլել կամ հստակ խոսել և նրա մատերն այտուցվել էին: Դիմումատուի խոստովանական ցուցմունքը և նրա դեմ քրեական գործի հարուցումը 1999թ. ապրիլի 16-ին դիմումատուն գործը քննող քննիչի կողմից հարցաքննվել է որպես կասկածյալ և խոստովանել է նրան, որ ինքնաձիգից պատահաբար կրակել է զինծառայող Հ.-ին: Ապրիլի 17-ին դիմումատուին կանխամտածված սպանություն կատարելու մեղադրանք է առաջադրվել և նա քննիչի կողմից հարցաքննվել է որպես մեղադրյալ: Որպես մեղադրյալ հարցաքննության ժամանակ դիմումատուն կրկնել է իր կողմից տված խոստովանական ցուցմունքը: Հետագայում դիմումատուն բերվել է դեպքի վայր, որտեղ տեսաձայնագրիչի առջև պնդեց իր ցուցմունքը: Նույն օրը դիմումատուն նախնական կալանքի է վերցվել: Ըստ դիմումատուի, ոստիկանությունից ազատ արձակվելուց անմիջապես հետո զինծառայողներ Ս.-ն և Ա.-ն գրավոր տեղեկացրել են ՀՀ զինվորական դատախազին, որ իրենց հարկադրել էին զրպարտել դիմումատուին: 1999թ. հունիսի 19-ին դիմումատուն և զինծառայողներ Ս.-ն և Ա.-ն ենթարկվել են բժշկական զննության, որը նրանց եղունգներին և Ա.-ի գլխի վրա տարբեր վնասվածքներ արձանագրեց: 16. 1999թ. օգոստոսի 11-ին դիմումատուի և զինծառայող Ս.-ի միջև անցկացվել է առերեսում, որի ժամանակ վերջինս պնդեց նախկինում դիմումատուի դեմ տված իր ցուցմունքը:

1999թ. հոկտեմբերի 26-ին տեղի ունեցած դատական նիստի ընթացքում զինծառայող Ս.-ն հաստատել է դիմումատուի դեմ նախկինում տված իր ցուցմունքը: 1999թ. դեկտեմբերի 6-ին Սյունիքի մարզի առաջին աստիճանի դատարանը դիմումատուին մեղավոր է ճանաչել կանխամտածված սպանության կատարման մեջ և դատապարտեց ազատազրկման 13 տարի ժամկետով:

**Եվրոպական դատարանի եզրահանգումը** Ամփոփելով՝ եվրոպական դատարանն արձանագրել է, որ պնդումը, թե խոշտանգումների միջոցով ձեռք բերված ապացույցը հիմք չի ծառայել դիմումատուի դատապարտման համար, հակասում է գործի փաստական հանգամանքներին: Այս առումով դատարանն արձանագրել է **Կոնվենցիայի 6-րդ** հոդվածի խախտում: Բոլոր երեք աստիճանի դատարանների կայացրած դատավճիռներից ակնհայտ երևում է, որ դիմումատուից և վկա Ս.-ից բռնությամբ կորզված ցուցմունքներն որոշիչ դեր են խաղացել դիմումատուին դատապարտելու հարցում: Իրականությանը համապատասխանում է նաև այն, որ դիմումատուի դատապարտումը հիմնված է եղել նաև մի շարք այլ



ապացույցների վրա: Այնուամենայնիվ այդ ապացույցները օգտագործվել էին միայն գործով երեք գլխավոր ապացույցները, մասնավորապես դիմումատուի և վկաներ Տ.-ի և Ա.-ի՝ բռնության ազդեցության տակ տված ցուցմունքները, հաստատելու համար: Դատարանները նաև հիմնվել են Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանում տեղի ունեցած առաջին դատավարության ժամանակ տված վկա Տ.-ի ցուցմունքի վրա: Այնուամենայնիվ, գործը երեք անգամ քննվել է առաջին ատյանի դատարանում, և երկրորդ ու երրորդ դատավարությունների ժամանակ վկա Տ.-ն ցուցմունք է տվել, որ նա հարկադրված է եղել զրպարտել դիմումատուին խոշտանգումների և ահաբեկության հետևանքով, և որ ինքը անտեղյակ է զինծառայող Հ.-ի սպանության հանգամանքներից:

### **Դատարանի գնահատականը**

Գործի փաստական հանգամանքներից ելնելով՝ դատարանը հանգել է այն եզրակացության, որ ներպետական դատարանները դիմումատուին մեղավոր ճանաչելու ապացույցների շարքում որպես ապացույց օգտագործել են նաև դիմումատուի խոստովանական ցուցմունքը և վկաներ Տ.-ի ու Ա.-ի բռնության ազդեցության տակ տված ցուցմունքները, իսկ բռնության ազդեցության տակ ձեռք բերված ցուցմունքների օգտագործումը խախտում է դիմումատուի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները: Կոնվենցիայի 6-րդ հոդվածը երաշխավորում է արդար դատաքննության իրավունքը՝ միևնույն ժամանակ, այն չի սահմանում ապացույցի ընդունելիության վերաբերյալ կանոններ, որպես այդպիսիք, որն ի սկզբանե հանդիսանում է ներպետական օրենքի կարգավորման առարկա, հետևաբար, սկզբունքորեն դատարանի խնդիրը չէ որոշել ապացույցների որոշակի տեսակների, օրինակ, ներպետական օրենսդրության խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործման թույլատրելիությունը, կամ որոշել արդյոք դիմումատուն իրականում մեղավոր է, թե ոչ:

Հոդված 3-ի խախտումով ձեռք բերված ապացույցի՝ քրեական դատավարության ժամանակ օգտագործումը, դատավարության արդարության առումով լուրջ խնդիրներ է առաջացնում: Մեղադրող ապացույցը, լինի դա խոստովանության կամ իրեղեն ապացույցի տեսքով, որը ձեռք է բերվել բռնությունների գործադրման միջոցով կամ դաժանությունների կամ այլ վերաբերմունքի, որը կարելի է բնութագրել որպես խոշտանգում, երբեք չպետք է դրվի տուժողի մեղքի ապացույցի հիմքում, անկախ նրա ապացուցողական նշանակությունից: Ցանկացած այլ եզրահանգում միայն կծառայի բարոյապես դատապարտելի արարքը անուղղակիորեն արդարացնելու համար, որը Կոնվենցիայի հոդված 3-ի հեղինակները ջանացել են արգելել, այլ կերպ ասած «թույլ կտա դաժանությունների գործադրումն օրենքին քողի տակ»: Եվրադատարանն արձանագրել է նաև, որ դիմումատուն հարկադրված է եղել

խոստովանական ցուցմունքներ տալ, իսկ վկաներ Տ-ն և Ա-ն հարկադրված են եղել տալ ցուցմունքներ, որոնք ապացուցում են դիմումատուի մեղքը:

Դատարանն այնուհետև նշել է, որ նման վերաբերմունքի հետևանքով ձեռք բերված ցուցմունքները փաստորեն օգտագործվել էին ներպետական դատարաններում որպես ապացույց՝ դիմումատուի դեմ քրեական դատավարությունում: Ավելին, սա կատարվել էր անտեսելով այն փաստը, որ վատ վերաբերմունքի ցուցաբերման փաստն արդեն հաստատված էր զուգահեռ ընթացող վարույթում, որը հարուցվել էր ոստիկանության քննարկվող աշխատակիցների նկատմամբ: Այս կապակցությամբ դատարանը նշել է, որ ներպետական դատարանները արդարացրել են խոստովանական ցուցմունքի օգտագործումը այն փաստերով, որ դիմումատուն խոստովանել էր քննիչին այլ ոչ ոստիկանության աշխատակիցներին, որոնք նրա նկատմամբ վատ վերաբերմունք էր ցուցաբերել, որ վկա Տ-ն հաստատել էր իր նախկին ցուցմունքները 1999թ. օգոստոսի 11-ին առերեսման ժամանակ և այն փաստով, որ երկու վկաներն էլ Սյունիքի մարզի առաջին աստյանի դատարանում համանման ցուցմունքներ էին տվել 1999թ. հոկտեմբերի 26-ի դատալսման ժամանակ: Նման հիմնավորումը սակայն համոզիչ չէ Դատարանի համար: Նախ և առաջ, Դատարանի կարծիքով առկա են համոզիչ ապացույցներ այն մասին, որ անձը ենթարկվել է վատ վերաբերմունքի, ինչպես նաև հոգեբանական ճնշումների և սպառնալիքների: Այն փաստը, որ դիմումատուն խոստովանել, կամ իր հետագա ցուցմունքներում հաստատել է ճնշման տակ տրված իր խոստովանությունը ոչ թե նշված վատ վերաբերմունքի ցուցաբերման համար պատասխանատու, այլ մեկ այլ մարմնին, չպետք է մեխանիկորեն հանգեցնի այն եզրակացության, որ նման խոստովանությունը կամ հետագա ցուցմունքները չեն հանդիսացել հետևանք՝ նրա նկատմամբ ցուցաբերված վատ վերաբերմունքի և նրա հետագա ապրումների վերաբերյալ հնարավոր վախի: Երկրորդ. նման արդարացումը ակնհայտորեն հակասում է այն եզրահանգումներին, որոնք շարադրվել են ոստիկանության՝ խոշտանգումներ կիրառած աշխատակիցների նկատմամբ կայացված մեղադրական դատավճռում, համաձայն որի «սպառնալով շարունակել խոշտանգումները՝ ոստիկանության աշխատակիցները ստիպել են դիմումատուին խոստովանել»:

***ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ վճռել է, որ բռնության ազդեցության տակ ձեռք բերված ցուցմունքների օգտագործումը խախտում է դիմումատուի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները արդար դատաքննության իրավունքը:***

**Մամփկոնյանն քնդդեմ Հայաստանի**

**Խախտում 6-րդ հոդվածի 1-ին կետ դատարանի մատչելիության իրավունք**

**Դիմումատուի կողմից ներկայացված լրացուցիչ փաստարկները չքննելը:**

**ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ**

Դիմումատուին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ ճանապարհանին երթևեկության կանոնների խախտման համար, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ: 2004թ. հոկտեմբերի 28-ին Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի կողմից դիմումատուն մեղավոր է ճանաչվել վերոնշյալ հանցանքը կատարելու մեջ: Դիմումատուն ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի 2004թ. դեկտեմբերի 27-ի որոշմամբ մերժվել է: 2004թ. դեկտեմբերի 31-ին դիմումատուն նշված դատավճռի դեմ բերել է վճռաբեկ բողոք: Վերաքննիչ դատարանի որոշման պատճեն դիմումատուն ստացել է միայն 2005թ. հունվարի 10-ին: 2005թ. հունվարի 12-ին դիմումատուն, ի լրումն դեկտեմբերի 31-ի բողոքի, վճռաբեկ դատարան է ներկայացրել 8 էջից բաղկացած իրավական վերլուծություն: Վճռաբեկ դատարանը փետրվարի 4-ին քննել է դիմումատուի վճռաբեկ բողոքը և այն թողել է առանց բավարարման, իսկ հունվարի 12-ին ներկայացրած լրացուցիչ փաստարկները քննության չի առել՝ պատճառաբանելով, որ դրանք ներկայացվել են բողոք բերելու դատավարական ժամկետների խախտմամբ:

**Եվրոպական դատարանի գնահատականը**

Եվրոպական դատարանն արձանագրել է, որ վերաքննիչ դատարանի 2004թ. դեկտեմբերի 27-ի որոշման պատճենը դիմումատուին հանձնվել է օրենքով սահմանված եռօրյա ժամկետի խախտմամբ, այն է՝ 10 օր անց: Ուստի այդ տաս օրերի ընթացքում դիմումատուն իր մոտ չի ունեցել վերոնշյալ դատավճռի պատճեն, որն իրեն մինչև բողոքարկման համար օրենքով սահմանված ժամկետի ավարտը այդ դատավճռի դեմ պատճառաբանված բողոք ներկայացնելու հնարավորություն կտար: Նման պարագայում դիմումատուին չի կարելի մեղադրել իր՝ 2004թ. դեկտեմբերի 31-ի բողոքում մանրամասն փաստարկներ չներկայացնելու և դա բողոքարկման համար օրենքով սահմանված ժամկետի ավարտից հետո ներկայացնելու համար: Եվրոպական դատարանը եզրակացրել է նաև, որ չնայած լրացուցիչ փաստարկներ ներկայացնելու վերաբերյալ հստակ կանոնների բացակայությանը, դիմումատուն այդ փաստարկները առանց անհարկի

ուշացման, այն է՝ վերաքննիչ դատարանի դատավճռի պատճեն ստանալուց ընդամենը մի քանի օր հետո ներկայացնելով՝ գործել է բարեխղճորեն:

ԱՅՍ ՀԻՄՆԱԿՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ վճռել է, որ դիմումատուի կողմից 2005թ. հունվարի 12-ին ներկայացված լրացուցիչ փաստարկների քննության մերժումը անհամաչափորեն խախտել է դիմումատուի դատարանի մատչելիության իրավունքը:

Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի

Արդար դատարանության իրավունքի խախտում, իր դեմ ցուցմունք տված անձին հարցաքննելու իրավունքի սահմանափակում

**ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ**

Դիմումատուն ծնվել է 1938թ. և ապրում է Երևան քաղաքում: 2003թ. փետրվար և մարտ ամիսներին Հայաստանում նախագահական ընտրություններ էին անցկացվել: Դիմումատուն ընտրությունների ընթացքում հիմնական ընդդիմադիր թեկնածու հանդիսացող՝ Հայաստանի ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ) ներկայացնող թեկնածուի վստահված անձն էր: Գործող նախագահին պարտվելուց հետո ՀԺԿ թեկնածուն բողոքարկել էր ընտրությունների արդյունքները սահմանադրական դատարանում, որը 2003թ. ապրիլի 16-ին առաջարկել էր մեկ տարվա ընթացքում Հայաստանում անցկացնել վերընտրված նախագահի վստահության հանրաքվե: Քանի որ 2004թ. ապրիլին լրացել էր մեկ տարվա վերջնաժամկետը, վերընտրված նախագահի լեգիտիմությունը վիճարկելու համար ընդդիմությունը քարոզարշավ է ծավալել: 2004թ. մարտի վերջերին երկու հիմնական ընդդիմադիր խմբակցությունները հայտարարել են ցույցերի շարք սկսելու իրենց մտադրության մասին՝ պահանջելով վերընտրված նախագահի հրաժարականը: Դիմումատուն պնդում է, որ 2003թ. փետրվարից մինչև իր ձերբակալման՝ 2004թ. ապրիլն ընկած ժամանակահատվածը նա իր քաղաքական գործունեության պատճառով ենթարկվել էր շարունակական հետապնդման: Մասնավորապես, ոստիկանությունը հաճախ դիմումատուին հրավիրում էր ոստիկանության բաժին առանց որևէ պատճառի և պահանջում էր, որ նա դադարեցնի իր քաղաքական գործունեությունը և ընդդիմությանն աջակցություն ցույց տալը: 2004թ. մարտի 30-ին նաև դիմումատուի նակտամաբ դեմ քրեական օրենսգրքի 301 հոդվածի և 318 հոդվածի 2-րդ մասի հիմքով հարուցվել է քրեական գործ՝ պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն և Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ փոփոխելուն ուղղված կոչեր անելու և իշխանության ներկայացուցիչներին հրապարակայնորեն վիրավորելու փաստի առթիվ: Դիմումատուին առաջադրված մեղադրանքի հիմքում դրվել են վկաների ցուցմունքներ, ովքեր պնդել են,

որ դիմումատուն առևտրի կենտրոնում թռուցիկներ է բաժանել և համապատասխան կոչեր արել: Նախաքննության ընթացքում ցուցմունք տված վկաներից մի քանիսը դատական քննությանը չեն ներկայացել, բայց նրանց ցուցմունքները դրվել են մեղադրանքի հիմքում: Դատարանը պատճառաբանել է, որ նրանք բացակայում են ՀՀ-ից և նրանց գտնվելու վայրը հայտնի չէ: Դատաքննության ժամանակ գործը քննող դատավորը հայտարարել է, որ ոստիկանությունից պաշտոնական գրություն է ստացել, որտեղ նշված էր, որ վկա Ս.Կ.-ն իր մշտական բնակության վայրում չէր, վկա Օ.Վ.-ն լքել է իր մշտական բնակության վայրը և ապրում է մեկ այլ տեղում: Դատախազը պահանջել է, որպեսզի այդ վկաների կողմից նախաքննության ընթացքում տրված ցուցմունքները հրապարակվեն: Դիմումատուն և իր փաստաբանը տվել էին իրենց համաձայնությունը, ինչից հետո ընթերցվել էին ցուցմունքները: Այնուհետև դիմումատուն հարցաքննվել է, որի ընթացքում նա ընդունել է, որ թռուցիկներ է տարածել, սակայն հերքել է իշխանության բռնությամբ զավթմանն ուղղված որևէ կոչ անելը: Առաջին ատյանի դատարանը դիմումատուին մեղավոր է ճանաչել և սահմանել մեկ տարվա պայմանական պատիժ՝ միևնույն ժամանակ կարգադրել, որ դիմումատուին ազատեն կալանքից մշտական բնակության վայրը չլքելու գրավոր պարտավորությամբ: Առաջին ատյանի դատարանը վճիռը կայացրել է նաև բացակա այն վկաների նախաքննական ցուցմունքների հիման վրա, որոնց դատաքննության ընթացքում հնարավոր չի եղել հայտնաբերել, սակայն որոնց ցուցմունքներն էական են եղել գործի համար:

### **Դատարանի գնահատականը**

#### ***6-րդ հոդվածի 3-րդ կետի (դ) ենթակետը 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ միասին վերջրած***

Սույն գործով Դատարանը նշել է, որ դիմումատուն մեղավոր էր ճանաչվել պետական իշխանությունը բռնությամբ զավթելուն ուղղված կոչեր անելու համար: Այդ կոչերը հանդիսանում էին առևտրի կենտրոնում թռուցիկներ բաժանելու ընթացքում նրա կողմից ենթադրաբար մի շարք անձանց հասցեագրված ցույցին մասնակցելու իր բազմազան հայտարարությունները: Այդ անձինք հանդես են եկել դիմումատուի գործով որպես վկաներ: Չնայած ոստիկանության երկու ձեռքակալող սպաներ նույնպես հայտարարություններ են արել, որոնք հաշվի են առնվել ներպետական դատարանների կողմից, սակայն նրանց հայտարարությունները ծառայել են բացառապես որպես հանգամանքների ապացույց, քանի որ ոստիկաններից ոչ ոք չի պնդել, որ լսել է դիմումատուի կողմից առևտրի կենտրոնում արված հայտարարությունները: Այսպիսով, դիմումատուի դեմ ամբողջ քրեական գործը հիմնված է եղել վերը նշված հինգ վկաների ցուցմունքների վրա, ուստի նաև՝ բացակա երկու վկաների ցուցմունքների հաշվառմամբ: Դիմումատուին, այնուամենայնիվ, չի տրվել հնարավորություն անձամբ հարցաքննելու

վկային ոչ՝ մինչդասական վարույթի ժամանակ, և՛ ոչ էլ դատարանում: Որևէ դատական իշխանություն նույնպես երբևէ չի լսել այս վկաներին: Դատարանը նշել է, որ այդ վկաների չներկայանալու պատճառն իրենց ենթադրյալ բացակայությունն էր Հայաստանից: Այնուամենայնիվ, համոզիչ չէ, որ գործի հատուկ հանգամանքների դեպքում սա կհանդիսանար հարգելի պատճառ, որը կարդարացներ այդ վկաներին չհարցաքննելը և իրենց ցուցմունքները չներկայացնելը: Հատկանշական է, այն փաստը, որ եթե վկան բացակայում է երկրից, որտեղ վարույթն ընթանում է, դա ինքնին բավարար չէ 6-րդ հոդվածի 3-րդ կետի (դ) ենթակետի պահանջներին բավարարելու համար, որը Պայմանավորվող պետություններից պահանջում է ձեռնարկել դրական քայլեր՝ մեղադրյալին հնարավորություն ընձեռելով հարցաքննել իր դեմ ցուցմունք տված վկաներին: Այդպիսի միջոցառումները կազմում են Պայմանավորվող պետությունների կոմից կատարման ենթակա պարտավորությունների մաս, որը պետք է երաշխավորի 6-րդ հոդվածով նախատեսված իրավունքների արդյունավետ իրականացում: Դատարանն ընդունել է, որ ներպետական դատարանները գործադրել են որոշակի ջանքեր վերոնշյալ վկաներ բացակայության պատճառների մասին տեղեկանալու և նրանց ներկայությունն ապահովելու համար: Ինչպես պարզվում է, նրանց չներկայանալուց հետո առաջին ատյանի դատարանը դիմել է ոստիկանության օգնությանը, մինչդեռ վերաքննիչ դատարանը որոշել է հարկադրել նրանց ներկայանալ դատարան՝ հետաձգելով 2004թ. հունիսի 30-ի և հուլիսի 6-ի դատական նիստերը և հանձնարարելով ոստիկանությանն ապահովել նրանց ներկայությունը հաջորդ նիստին: Այնուամենայնիվ, հայտնի չէ թե բացի նրանց մշտական բնակության վայրից բացակայության մասին տեղեկանալուց, ինչպիսի այլ ջանքեր էր գործադրվել ոստիկանության կողմից այդ վկաների գտնվելու վայրը պարզելու համար: Չկա որևէ ապացույց, որը կվկայեր այն մասին, արդյոք ոստիկանությունն երբևէ փորձել է գտնել նրանց բնակության նոր հասցեները կամ տեղեկանալ նրանց բացակայության մանրամասներին, ներառյալ արդյոք դա մշտական, թե ժամանակավոր բնույթ էր կրում և արդյոք վերջիններս ապագայում նպատակ ունեին այցելել կամ վերադառնալ տուն: Չնայած այդպիսի տեղեկատվության բացակայությանը, առաջին ատյանի դատարանը հրապարակել է նրանց ցուցմունքները:

Վերը նշված դիտարկումները բավարար են եղել դատարանի համար միանշանակ եզրակացնելու, որ դատապարտման հարցը լուծելիս առանց հիմնավորման սահմանափակվել է դիմումատուի՝ վճռորոշ դեր ունեցող վկաներին հարցաքննելու իրավունքը: Նա չէր կարող նրանց արժանահավատ լինելու հանգամանքը ենթարկել մանրակրկիտ ստուգման կամ կասկածի տակ դնել նրանց գրավոր ցուցմունքները: Սա, հատկապես, անհանգստացնող է, հաշվի առնելով, որ նշված վկաներն անձամբ ծանոթ չեն եղել դիմումատուին և վարույթի ոչ մի փուլում երբևէ նրանցից չի պահանջվել ճանաչել

դիմումատուին:

Համապատասխանաբար, ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ վճռել է, առկա է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի (դ) ենթակետի խախտում՝ 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ միասին վերցրած

**Գրիգորյանն քննդեմ Հայաստանի**

**6-րդ հոդվածի 1-ին կետ՝ «ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտում**

**ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ**

Դիմումատուն ծնվել է 1975 թվականին և ապրում է Երևանում: Դիմումատուն մասնագիտությամբ իրավաբան է: 2005 թվականի հունիսի 10-ին քննիչը որոշում է կայացրել դիմումատուի նկատմամբ քրեական գործ հարուցելու մասին՝ ՀՀ քր. օր. 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի և 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով: Քննիչը միջնորդություն է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան՝ դիմումատուին երկամսյա ժամկետով կալանավորելու վերաբերյալ: Քննիչն իր միջնորդությունը հիմնավորել է այն փաստով, որ դիմումատուն կատարել է ծանր հանցագործություն և որ ազատության մեջ մնալով կարող է խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը փաստաթղթերը կեղծելու, նախաքննության տվյալները հրապարակելու և այլ գործողություններով որպես վկա բազմիցս հրավիրվել է հարցաքննության, սակայն հրաժարվել է ցուցմունքներ տալուց, հարցերին պատասխանելուց, կատարված հանցանքների հետևանքով հափշտակել է առանձնապես խոշոր չափի գումար: Պարզվել է, որ քրեական գործին վերաբերող նյութերի երկու հատոր է ներկայացվել դատարան՝ ի հիմնավորումն այդ միջնորդության: Դատավորը քննիչի միջնորդությունը հիմնավոր է համարել և կարգադրել է դիմումատուին կալանավորել մինչև 2005 թվականի դեկտեմբերի 7-ը՝ հաշվի առնելով մեղսագրվող արարքների հասարակական վտանգավորությունը, ինչպես նաև այն, որ այդ արարքների համար նախատեսվող ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է և բավարար հիմքեր կան ենթադրելու, որ դիմումատուն կարող է թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից, խոչընդոտել մինչդատական վարույթում գործի քննությանը:

Դիմումատուն բողոքել է, որ նրա դեմ քրեական վարույթի տևողությունը խախտել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի՝ «ողջամիտ ժամկետին» վերաբերող պահանջը, որը, համապատասխանաբար, սահմանում է.

**«Յուրաքանչյուր ոք, ... նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի ...[որևէ] դատարանի կողմից ողջամիտ ժամկետում ... դատաքննության իրավունք...»:**

Դիմումատուն պնդել է, որ 2006 թվականի օգոստոսի 10- ից հետո նախաքննության մարմնի կողմից որևէ գործողություն չի իրականացվել: Ավելին, քրեական գործ հարուցելու և վարույթ ընդունելու՝ 2005 թվականի հունիսի 10-ի և այն կասեցնելու՝ 2006 թվականի օգոստոսի 10-ի միջև ընկած ժամանակահատվածում գործի քննությունը զգալիորեն ձգձգվել է: Դիմումատուի դեմ հարուցված քրեական գործը տևել է հինգ տարուց ավելի և անորոշ էր, թե այն երբ կավարտվի, եթե առհասարակ պիտի ավարտվեր: Դիմումատուն պնդել էր, որ իշխանությունները չեն ցանկացել դադարեցնել դիմումատուի գործով քրեական հետապնդումը, այլ ցանկացել են այն օգտագործել որպես ճնշման միջոց՝ կապված դիմումատուի՝ որպես մարդու իրավունքների ոլորտում փաստաբանի գործունեության առանձնահատուկ բնույթի հետ:

#### **Դատարանի գնահատականը**

Դատարանը նշել է, որ քրեական վարույթի տևողությունը որոշելիս հաշվի առնվող ժամանակահատվածը սկսվում է այն օրվանից, երբ անձին «մեղադրանք է առաջադրվում»՝ այդ եզրույթի ինքնավար և բովանդակային իմաստով, այն է՝ ձերբակալման օրը, սովյալ անձին՝ իրեն հետապնդելու մասին պաշտոնապես ծանուցելու օրը, կամ նախնական քննության մեկնարկի օրը: Այն ավարտվում է այն օրը, երբ մեղավորությունը վերջնականապես հաստատվում է կամ վարույթը կարճվում է:

Վարույթի տևողության ողջամտությունը գնահատվում է ելնելով քննության առարկա գործի կոնկրետ փաստական հանգամանքներից՝ հաշվի առնելով Դատարանի նախադեպային իրավունքով սահմանված չափորոշիչները, մասնավորապես՝ գործի բարդությունը, դիմումատուի վարքագիծը և իրավասու մարմինների վարքագիծը, և դիմումատուի համար ռիսկի գործոնը: Սույն գործում դիմումատուի դեմ քրեական վարույթը հարուցվել է 2005 թվականի հունիսի 10-ին: Նույնիսկ այն պայմաններում, երբ այդ պահից մինչև 2005 թվականի հոկտեմբերի 7-ին ձերբակալվելը դիմումատուն պաշտոնապես ներգրավված էր որպես վկա, քրեական գործ հարուցելու որոշման բովանդակությունից ակնհայտ է, որ դիմումատուն քրեական գործում արդեն կասկածվողի վիճակում էր: Հետևաբար, դիտարկման ենթակա ժամկետը սկսվում է 2005 թվականի հունիսի 10-ին: Դատարանը նշել է, որ վարույթը կասեցվել էր 2006 թվականի 10-ին և դեռևս ընթացքի մեջ էր 2010 թվականի սեպտեմբերի 10-ին՝ այն ամսաթվին, երբ սույն գործով ներկայացվեց կառավարության վերջին առարկությունը: Դատարանին չի ներկայացվել որևէ նյութ, որը



հնարավորություն է տալիս ենթադրել, որ դիմումատուի դեմ հարուցված վարույթը երբևէ, ըստ էության, ավարտվել է: Այսպիսով, Դատարանը նշել է, որ այդ պահի դրությամբ տվյալ վարույթը ընթացքի մեջ է առնվազն հինգ տարի և երեք ամիս: Դատարանն արձանագրել է, որ դիմումատուի համար ռիսկի գործոնի աստիճանը մեծ էր, քանի որ նա երկարատև ժամանակահատվածում տառապել է իր ապագայի մասին անորոշության զգացումից՝ հաշվի առնելով, որ նրան սպառնում է քրեական գործով դատապարտում: ***Այս առումով Դատարանը վերահաստատել է, որ քրեական վարույթում մեղադրյալն իրավունք ունի պահանջելու, որ իր գործի քննությունն իրականացվի հատուկ ջանասիրությամբ, և որ քրեական գործերում 6-րդ հոդվածը կոչված է ապահովելու այն, որ մեղադրյալը, վարույթի արդյունքների առումով, չափազանց երկար չգտնվի անորոշ իրավիճակում:***

***Ավելին, Դատարանին չի ներկայացվել որևէ նյութ, որը հնարավորություն է կտար ենթադրել, որ գործն ունեցել է առանձնակի բարդություն: Այն փաստը, որ գործով առկա էին երեք մեղադրյալներ, ինքնին բավարար չէր այդպիսի ենթադրություն անելու համար: Կառավարությունը նույնպես չի վիճարկել, որ այդ գործով որոշում կայացնելը առանձնապես բարդ էր: Ամեն դեպքում, Դատարանը այն կարծիքին է, որ առնվազն հինգ տարվա և երեք ամսվա ժամանակահատվածի տևողությունը, որի ընթացքում գործը մնացել էր նախաքննության փուլում, չի կարող բացատրվել բացառապես գործի բարդությամբ:***

Դատարանը նշել է նաև, որ պարզ չէ, թե արդյոք 2005 թվականի հոկտեմբերի 10-ի և 2006 թվականի օգոստոսի 10-ի՝ վարույթի կասեցման ամսաթվի միջև ընկած ժամանակահատվածում կատարվել են արդյոք քննչական գործողություններ: Ավելին, գործի նյութերից հնարավոր չէ ենթադրել, որ վարույթի կասեցումից հետո, այսինքն՝ առնվազն չորս տարվա ընթացքում իրականացվել են քննչական գործողություններ: Կառավարությունը տեղեկատվություն չի տրամադրել այն մասին, թե արդյոք մեղադրող կողմը ձեռնարկել է որևէ միջոցառում անհայտ կորած անձանց հայտնաբերման ուղղությամբ՝ այդպիսի վարույթի շարունակական կասեցման համար հիմքը վերացնելու նպատակով:

**ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՍԲ ԴՍԱՐԱՆԸ** վճռել է, ***որ վարույթի տևողությունը եղել է չափազանց երկար և չի բավարարել «ողջամիտ ժամկետի» պահանջը:***

***Համապատասխանաբար, խախտվել է 6-րդ հոդվածի 1-ին կետը:***